Զեկույց
Մարդու իրավունքները բանակում և ազատազրկման վայրերում

ԵՐԵՎԱՆ - 2019թ

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիա»-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքներ, մշտադիտարկում և հրապարակայնություն» ծրագրի շրջանակներում «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ կողմից։

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ հասարակական կազմակերպությունը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները

Նախաբան

Զեկույցը կազմվել է «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ հրապարակումների, քննությունների արդյունքների, դատական գործերի, քաղաքացիների կարծիքների եւ դիմումների հիման վրա։

Հիմնական նպատակը՝ վերհանել այն խնդիրները, որոնց հաղթահարումը՝ քաղաքական կամքի առկայության դեպքում, կարող է բերել կտրուկ փոփոխությունների ՀՀ բանակում մարդու իրավունքների բնագավառում։

«Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ-ն տեսնում է իր գլխավոր առաքելությունը մարդու իրավունքների խախտումների դեմ պայքարը՝ լուսաբանման, խնդիրների վերհանման միջոցով։ Կազմակերպությունը իր **forrights.am** կայքի միջոցով ներկայացնում է իրավունքների խախտման կոնկրետ, իրական դեպքեր, փորձում է հասցնել այն պաշտոնյաներին եւ հրամանատարությանը՝ հետեւելով գործերի ընթացքին եւ տեղեկացնելով դրական կամ բացասական լուծումների մասին։

«Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ-ն իր կատարած փաստահավաք աշխատանքի արդյունքում հանրությանը ներկայացնում էր ՀՀ զինված ուժերում խաղաղ պայմաններում տեղի ունեցող զինծառայողների մահվան դեպքերի մանրամասները։ Հրատապ այցերը Հայաստանի տարբեր մարզերում մահացած զինծառայողների ընտանիքներին շատ դեպքերում օգնում են բացահայտել մահվան բուն պատճառները, ինչը զգաստացնում է քննչական մարմիններին։

Հարյուրավոր մարդիկ՝ զինվորներ, ծնողներ, դիմում են կազմակերպությանը, տեսնելով, որ ուրիշների խնդիրները հնարավոր է եղել լուծել լուսաբանման միջոցով, որ կարելի է այդկերպ կանխել խախտումների շարունակությունը։ Այդ պատճառով երբեմն հնչում են մեղադրանքներ առ այն, որ կայքում ներկայացված նյութերից կարելի է եզրակացնել, իբր բանակում ամեն ինչ վատ է, համատարած բռնություն է, անպատժելիություն եւ այլն։ Ակնհայտ է, որ ամեն ինչ այդքան միանշանակ չէ, եւ հազարավոր զինվորներ համեմատաբար հանգիստ ծառայում են։ **Սակայն առանձին դեպքերի լուսաբանումը թույլ է տալիս թիրախավորել խնդիրները եւ լուծումներ որոնել։**

Բանակում տեղի ունեցած բռնությունների զոհերի ճակատագրի, նրանց ու նրանց հարազատների իրավունքների պաշտպանությունը սկզբում ընկալվեց ոչ ադեկվատ կերպով։ Համակարգն անցավ «խուլ և շրջանաձև պաշտպանության»՝ զուգահեռաբար կիրառելով «արտագրոհների» մարտավարությունը։

Հատկապես 2018-ի Թավշյա հեղափոխությունից հետո քայլեր են ձեռնարկվում հարաբերությունների հիմքը բանակում փոխելու ուղղությամբ, այնպիսի մեխանիզմների ներդրման, որոնք զինվորներին թույլ կտան պաշտպանել իրենց

իրավունքները։ Սակայն փոփոխությունները դեռ չեն հասել հիմքին, եւ արատավոր երեւույթները շարունակվում են՝ եւ՛ մահվան դեպքերը թաքցնելը, եւ՛ անպատիժ բռնությունները, եւ՛ քրեական գործերի ապարդյուն քննությունը։

Առ այսօր յուրաքանչյուր զինվոր կարող է զոհ դառնալ այն արատավոր երեւույթների, որոնց մասին ահազանգում է կազմակերպությունը եւ որի հիման վրա կազմվել է սույն զեկույցը։

Առանձացրել ենք մի շարք հանգուցային երեւույթներ, որոնց արմատներն անհրաժեշտ է գտնել եւ ուղղել։

Անպատժելիություն

Հիմնական խնդիրներից մեկը՝ անպատժելիությունն է բանակում, որը տարբեր պատճառաբանություններ ունի։ Ըստ փորձագետների՝ արատավոր երեւույթների հեղինակներին կամ իրական հանցագործներին չեն պատժում ինչպես «համազգեստի պատիվը» փրկելու եւ աղբը տնից դուրս չհանելու կեղծ ցանկությունից, այնպես էլ «շրջանային կապի»՝ «круговая порука», կոչվածի պատճառով։ Չնայած հանրային վերահսկողության մեծացմանը, բանակը շարունակում է մնալ փակ համակարգ, եւ իրավունքների մասին ցանկացած փորձ ընկալում է որպես բանակի ներքին գործեր «քիթ խոթել»։

Սակայն զորակոչիկը հենց հավաքակայանից է զգում իր նկատմամբ խտրական վերաբերմունքը։ Ավելին, նա այդ մասին գիտի մինչ հավաքակայան գալը՝ տնից, դպրոցից, հարևաններից։ Անապահով ու խեղճ ընտանիքի երեխան գիտի, որ ինքը դատապարտված է վատ վերաբերմունքի։ Այդ զգացմանը նպաստում են ընտրյալների անպատժելիության մասին իրական պատմությունները, որոնք հաճախ վերածվում են լեգենդների՝ ձեւավորելով բանակում կաստայական մտածելակերպ։ Անպատժելիները առանձին կաստա են։

Դա պայմանավորված է նրանով, որ օրենքով սահմանված համակարգերին ու մեխանիզմներին զգալի չափով փոխարինում են ոչ ֆորմալ՝ քրեական մշակույթի հիման վրա գեներացված համակարգերն ու մեխանիզմները։ Քրեական միջավայրին բնորոշ երևույթները՝ կաստայականացումը, դրամաշորթությունը, բռնությունը, ստորացումները, հաշվեհարդարները դառնում են առօրյայի մաս։

Վերին օղակի սպաների անպատժելիությունը հաճախ բերում է ռեցիդիվի՝ հանցագործությունների կրկնությանը։

«Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ նախագահ Ժաննա Ալեքսանյանը Մարտակերտի զորամասում տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ հարց է բարձրացրել քննարկումների ժամանակ՝ «եթե նույն զորամասում մահվան դեպքերը երեքն են և ավել, ի՞նչ պետք է արվի»: Նրան պատասխանում են, որ պետք է հրամանատարության նկատմամբ քրեական գործ հարուցել: «Սակայն նման դեպք չկա»,-նշեց իրավապաշտպանը: «Չի կարող հրամանատարը անձեռնմխելի լինել: Չկա սպա, որը պատասխանատվության է ենթարկվում, կա միայն մեղավոր զինվոր»,- հայտարարեց Ժաննա Ալեքսանյանը:

Forrights կայքում բազմաթիվ նյութեր են տեղադրված, որոնք խոսում են անպատժելիության մթոլորտի մասին:

1. 2018-ի փետրվարի 20-ին Արցախի Մարտունի 3 զորամասի նախկին ծառայող Դավիթ Քամալյանը 7 հրազենային վիրավորում է ստացել ծառայակցի՝ սերժանտ Սերյոժա Նահապետյանի կրակոցից, սակայն այս տարվա հունվարին քրեական գործը կարճվել է:

Դիրքում ուշ երեկոյան Դավիթը գնացել է զուգարան, հետ գալուց սերժանտը դիմահար կրակել է, վախեցել է, թե թշնամին է:

Դավիթի հայրը՝ Սերյոժա Քամալյանը, համոզված է, որ շուրջ մեկ տարի քննվող գործը փակվել է փողի ուժով: «100 տոկոս, առանց փողի էդ գործը չէր փակվի», -Forrights.am-ին հայտարարեց զինվորի հայրը՝ շարունակելով. «Կրակողի ընտանիքը եկել, գումար ա առաջարկել, ես հրաժարվել եմ, ասել եմ՝ նա պիտի նստի, ասեցին, եթե չվերցնես, տանելու ենք, քննիչին տանք»:

Զինվորի վրա 15 փամփուշտ կրակած սերժանտի դեմ քրեական գործը կարճվել է. հայրը կասկածում է, որ «փողն է դեր ունեցել»

2. ԱԱԾ հերթական բացահայտումը վերաբերում էր 2017 թվականի դեկտեմբերից մինչև 2018 թվականի հունիսը N զորամասում կատարված վառելանյութի յուրացումներին:

Բանակում վառելիքի անօրինական բիզնեսի տարածվածության մասին բարձրաձայնվել է տարիներ շարունակ, բայց պաշտպանության նախարարները և դատախազությունը մատների արանքով են նայել այդ երևույթին: Նրանց հետ, ովքեր փորձել են կանխել թալանը, զորամասերի ղեկավարները դաժան հաշվեհարդար են տեսել:

2009 թվականի ամռանը Արարատի «Զոդի չաստ» կոչվող N զորամասի զինծառայողները վառելիք էին գողացել: Ավագ լեյտենանտ Այվազյանը փորձել էր խանգարել գողերին, և փոխանակ խրախուսվեր, ինչպես ինքն էր սպասում, ծեծի էր ենթարկվեց զորամասում արտոնյալ դիրք ունեցող գողերի կողմից:

2010 թվականին Ստեփանակերտում, գարնանային մի գիշերով զոհվեց ժամկետային զինծառայող Վալերի Մուրադյանը: Ըստ նրա մոր՝ Նանա Մուրադյանի, նրա որդուն փորձել են ներքաշել վառելիքի գողության մեջ. «Իմ տղան դեպքից 4 օր առաջ զանգեց տուն, ասաց որ վառելանյութի գողության է ականատես եղել:

2016 թվականի ապրիլի 25-ին Իջևանի զորամասում հրազենային վիրավորումից մահացավ ժամկետային զինծառայող Հովհաննես Պետրոսյանը: Գործ հարուցվեց ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով՝ ինքնասպանության, կամ ինքնասպանության փորձի հասցնելը: Տղայի հայրը, սակայն, Վաչիկ Պետրոսյանը չէր հավատում այս վարկածին: Նա պատմում էր ԶԼՄ-ների ներկայացուցիչներին, որ որդին սպանվել է վառելիքի գողությունը կանխելու համար:

Վառելիքի գողերը տարիներ շարունակ զինծառայողների գլուխներ են կերել

3. Պարտադիր ժամկետային զինծառայող Նարեկ Ադիբեկյանի սպանության գործով նախաքննությունն ավարտվել է դեռ մեկ ամիս առաջ: Գործն ուղարկվել է դատարան, սակայն հարազատները իրենց փաստաբանի միջոցով պահանջում են գլխավոր դատախազից այն հետ կանչել և կրկին քննել, նոր քննությունը հանձնարարելով այլ քննչական խմբի: Նրանք վստահ են՝ սպանությունը բացահայտված չի, հանցագործությունը կոծկել են մարդասպաններին պատասխանատվությունից ազատելու նպատակով:

Սպանված զինծառայողի հարազատները պահանջում են հետ կանչել գործը դատարանից

4. Եւս մեկ գործով եֆրեյտորի սպանությունից հետո մեղադրյալը շարունակում է ծառայությունը:

ՊՆ խոսնակ Արծրուն Հովհաննիսյանին լրագրողները հարցրեցին, թե արդյոք նա արդար է համարում այն, որ հրամանատարը հարբած վիճակում զինվորների վրա կրակ բացելուց հետո ազատ է արձակվում և նույնիսկ շարունակում է ծառայությունը, պատասխանեց. «Եթե դիտավորյալ սպանություն չի, երբեք սպային չեն կալանավորում»:

Կապիտանը սովորություն ունի հարբել և օդ կրակել. մարդասպան հրամանատարին չեն կալանավորել

Մահվան դեպքեր

Կյանքի իրավունքը մարդու ապրելու իրավունքն է, եւ բանակը պարտավոր է ապահովել այդ իրավունքը:

1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածը, 1950 թ. մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածը, իսկ ավելի ուշ՝ 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածն ամրագրեցին մարդու կյանքի իրավունքի երաշխավորման հարցում պետության պոզիտիվ պարտավորությունը:

ՀՀ Զինված ուժերում տեղի ունեցած մահվան, հատկապես սպանությունների և ինքնասպանության հասցնելու դեպքերի մասով մեղավորներին հայտնաբերելու և

պատժելու հարցում պետության թերացումն ու անգործությունը, հաճախ նաև՝ հանցավորներին կոծկելու գործելակերպը բերում է նման դեպքերի ավելացմանը: Մեղավորները հաճախ չեն բացահայտվում, իսկ երբեմն էլ նրանց փոխարեն պատասխանատվության են կանչվում ուրիշ՝ անպաշտպան մարդիկ: Նրանցից մի մասին չի հաջողվում ապացուցել իրենց անմեղությունը և նրանք դատապարտվում են ծանրագույն պատիժների:

9 ամիսների ընթացքում հայտնի է դարձել ՀՀ զինված ուժերում և ԼՂՀ ՊԲ-ում գրանցված մահվան ելքով 36 դեպքի մասին: 13 դեպք գրանցվել է ՀՀ, 21-ը՝ ԼՂՀ տարածքում: 34 մահվան դեպքերից 2-ը՝ սպանություն, իսկ 8-ը՝ ինքնասպանություն է:

2018-ի ապրիլյան հեղափոխությունից հետո իրավիճակը այս առումով այնքան էլ չի փոխվել: Որոշ դեպքերում շարունակվում է զոհերի թաքցնելը, քննությունների արհեստական ձգձգումը եւ մեղավորների կոծկումը:

Ներկայացնենք մի քանի օրինակ:

1. «Մամա ջան, մենակ կուզեմ, որ էս վաշտից ինձի հանեք: Էս վաշտից, որ ինձի հանեք, ամեն ինչ լավ կլինի: Մա՛մ, դժոխքը հենց էստեղ ա՝ մեր զորամասում…», տխուր էր էդ օրը երեխես, շա՛տ տխուր», - Forrights-ի հետ զրույցում պատմել էր հոկտեմբերի 1-ին «Մարտունի 2» զորամասում մահացած շարքային Գևորգ Հարոյանի մայրը՝ Արմինե Բեգլարյանը:

«Զորամասում ասում են, որ ինքնասպան ա եղել, բայց էդ սուտ ա, ինքը չէր կարա ինքնասպան լիներ: Մարտունիի դատախազությունից էլ ասում են, որ արձակված կրակոցը 2 մետրից ա եղել…բա տղես ո՞նց կարող էր էդ հեռավորության վրա ինքն իրեն կրակել:

Դեպքի առթիվ մեղադրանք է առաջադրվել 3 անձի, որից երկուսն այս պահին ձերբակալված են:

«2 ամիս ամեն օր տղայիս ծեծել են… Էնքան էր նիհարել, որ էդ ծանր զենքը չէր կարող անգամ բռնել»

2 ՀՀ Քննչական կոմիտեից հայտնում են, որ 2018թ. օգոստոսի 29-ին՝ ժամը 08:15-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի հերթապահ մասում հայտնաբերվել է զորամասի հերթապահ, ավագ լեյտենանտ Կարեն Սամվելի Հովհաննիսյանը՝ կզակի եւ գլխի գագաթնային շրջանում մահացու հրազենային վիրավորումով: Կատարվել է դեպքի վայրի զննություն:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ ինքնասպանության հասցնելը:

Զորամասի հերթապահ մասում հայտնաբերվել է ավագ լեյտենանտի դին՝ մահացու հրազենային վիրավորումով

Ինքնասպանություններ

ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում սպանության և ինքնասպանության հասցնելու հանցավոր արարքները նախատեսված են համապատասխանաբար 104-րդ և 110-րդ հոդվածներով: Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի՝ սպանությունը ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելն է: ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածը ինքնասպանության հասցնելու արարքը բնութագրում է հետևյալ կերպ. «Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը»:

Բանակում լռելյալ համաձայնությամբ ընդունված է սպանության փորձերը ներկայացնել որպես ինքնասպանություն: Փորձագետները մի քանի պատճառ են տեսնում՝ մեղավորների կոծկելուց մինչեւ սպանվածի ընտանիքը նպաստից զրկելու մտայնություն:

Կոծկելու համար իրավապահ համակարգի աշխատակիցները թույլ են տալիս աղաղակող ապօրինություններ (այդ թվում՝ դեպքի վայրի կեղծումները, ապացույցների աղավաղումը, կեղծ ապացույցների ստեղծումը): Միևնույն ժամանակ, սպանությունը ինքնասպանության հասցնելու հատկանիշներով գործի հարուցումը տուժող կողմին հոգեբանական ճնշումների և մանիպուլյացիայի ենթարկելու լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում:

Բանակում զինծառայողների նկատմամբ հրամանատարական կազմի կողմից կան բռնության դեպքեր: Այս մասին Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում «Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիա»-ի կողմից «Բանակում մարդու իրավունքների խախտումների և դրանց կանխարգելման մեխանիզմները» թեմայի քննարկման ժամանակ ասաց «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ ղեկավար Ժաննա Ալեքսանյանը:
«2018թ. -ին գրանցված հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով զոհերի թիվը 7-ն են, իսկ ոչ մարտականը՝ 56: Ոչ մարտական մահացությունների մասով մեծ թիվ են կազմում ավտովթարի հետևանքով մահացությունները՝ 17, առողջական խնդիրներով պայմանավորված մահացությունները 13-ն են, իսկ ինքնասպանություններ որակված դեպքերը՝ 11», - ասաց իրավապաշտպանը՝ հավելելով, որ ինքնասպանության դեպքերը փաստում են, որ բանակում ակնհայտ բռնության մթնոլորտ կա:

«Ինքնասպանության դեպքերը փաստում են, որ բանակում ակնհայտ բռնության մթնոլորտ կա»

Եւս մի քանի կոնկրետ օրինակ.

1. «3 անչափահաս երեխաների հայրը չէր կարող ինքնասպան լինել, իմ երեխան նման բան չէր կարող անել,- «Ազատություն ռադիոկայան»-ի հետ զրույցում ասել էր Ամանորի գիշերը սպանված պայմանագրային զինծառայող Էդգար Գրիգորյանի մայրը՝ Ալինա Սարգսյանը,- Էդ ո՞ր մի ինքնասպանն ա իրեն դոշից կրակում, որ մի քանի ժամ էլ տառապի, չմեռնի. հենա կդներ բերանից կկրակեր ու տեղում կմնար: Եթե մի բան ստում են, գոնե նենց ստեն, որ իրականությանը մոտ լինի»:
Ընտանիքի անդամները կտրականապես չեն հավատում ինքնասպանության վարկածին: Նրանք հայտարարում են՝ Էդգարի համածառայակիցներից այլ բան են լսում, պատկան մարմիններից՝ այլ:
«Էդ ո՞ր մի ինքնասպանն ա իրեն դոշից կրակում, որ մի քանի ժամ էլ տառապի, չմեռնի»

2. Ապրիլյան պատերազմի հերոս, ապարանցի սպա, կապիտան Անդրանիկ Մկրտչյանը զոհվել է 2017 թվականի օգոստոսի 20-ին, Մեղրիի N զորամասում: Նրա մահը որակել են ինքնասպանություն՝ քրեական գործ հարուցելով քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով՝ «Ինքնասպանության հասցնելը»: Հիմքը՝ կապիտանի ծոցագրպանում հայտնաբերված կասկածելի գրությունն է, որը նա իբր գրել է մահից առաջ և որով խնդրում է իր մահվան համար ոչ մեկին չմեղադրել:
Զոհված կապիտանի շահերը ներկայացնող փաստաբան Հայարփի Սարգսյանը պայքարում էր, որ նախաքննության մարմինը կրկնակի ձեռագրաբանական փորձաքննություն նշանակի: Վերջապես հասավ հաջողության: …. Forrights.am-ի հետ զրույցում քննչական կոմիտեի խոսնակ Նաիրա Հարությունյանը հաստատեց տեղեկությունը: «Զոհված կապիտան Անդրանիկ Մկրտչյանի գործով նշանակված է կրկնակի դտաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական համալիր փորձաքննություն», — ասաց նա:
Քննիչները, զինդատախազությունը ոչ մի հույս չէին տալիս, թե կփոխեն իրենց մոտեցումը այս գործին: Սառույցը շարժվեց միայն այն բանից հետո, երբ Նիկոլ Փաշինյանը հանդիպեց զոհված զինծառայողների ծնողների հետ, որոնց թվում էր նաև Անդրանիկ Մկրտչյանի հայրը՝ Արմեն Մկրտչյանը:
Ինքնասպանության մասին գրությունը կե՞ղծ էր. Կապիտան Անդրանիկ Մկրտչյանի մահվան գործով սառույցը շարժվեց

3. «Զինծառայող Արթուր Գասպարյանի սպանության դեպքով միակողմանի քննություն է տարվում: Նախաքննական մարմինն ամեն կերպ ջանացել է

սպանությունը ներկայացնել որպես ինքնասպանություն՝ ցույց տալով գործով իր շահագրգռվածությունը»,- Forrights-ի հետ զրույցում հայտարարեց փորձագետ Ռուբեն Մարտիրոսյանը:
Մայիսի 4-ի գիշերը, ժամը 01:10-ի սահմաններում մարտական հենակետում հայտնաբերվել էր 1 տարի 4 ամսվա զինծառայող Արթուր Գասպարյանի անշնչացած մարմինը:
«Մեկ կրակոցից հետո Արթուրն ուղղակի չէր կարող ողջ մնալ և երկրորդ կրակոցն արձակել». զինծառայողի մահվան շուրջ նոր հանգամանքներ են ի հայտ գալիս

Բանակում զոհված և այդ դեպքերն «ինքնասպանություն» որակված շուրջ 10 զինծառայողների ծնողներ հանդիպում ունեցան ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Հանդիպումը բնավ իշխանության նախաձեռնությունը չէր, նախորդ օրը զինծառայողների հայրերը «կտրել էին» Փաշինյանի ճանապարհը և ներկայացրել բանակում տեղի ունեցած մահվան դեպքերը:
Մահացած զինծառայողների ծնողների առաջին պահանջը եղել է իրենց որդիների վրայից հանել «ինքնասպանության կեղծ պիտակը» և արդար դատաքննություն իրականացնել կատարված սպանությունների գործով:
Նիկոլ Փաշինյանը «խնդրին լուծում տվեց»՝ հայտարարելով, որ այս հարցով Քննչական կոմիտեում Մոնիթորինգի հանձնաժողով կստեղծեն, որն էլ ավելի խորն ուսումնասիրություն կենթարկի զոհվածների քրեական գործերը: Հանձնաժողովում, բացի քննչական մարմիններից, կլինեն նաև վարչապետի կողմից ներկայացված ներկայացուցիչները և զոհված զինծառայողների հարազատների փաստաբանները:
«Մեր որդիների վրայից հանեք ինքնասպանության կեղծ պիտակը» Նիկոլ Փաշինյանն ընդունեց բանակում մահացած զինծառայողների հայրերին

Սեռական բռնություն

Փակ համակարգերի առանձնահատկություններից են սեռական բռնություններն ու ոչ ավանդական կողմնորոշում ունցող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը: Թեմայի նրբությունը շատերին ստիպում է լռել, եւ միայն առանձին դեպքերի հրապարակայնացումն է թույլ տալիս պատկերացնել երեւույթի մասշտաբներն ու ողբերգությունը: Չնայած, որ օրենքն արգելում է խտրականությունը, սակայն հարաբերությունները կարգավորող գործուն մեխանիզմներ չկան, եւ ամեն ինչ թողնված է հրամանատարի հայեցողությանը: Կարգավորումների բացակայությունը նաեւ հիմք է հանդիսանում դատարաններում մեղադրական բազայի թուլությանը:
Հաճախ զինվորներին հաջողվում է փրկել իրավապաշտպանների միջամտության շնորհիվ միայն: Բանակի հրամանատարությունը շարունակում է դիտարկել սեռական ոչ ավանդական կողմնորոշում ունեցողներին եւ սեռական բռնության ենթարկվածներին որպես «թույլ օղակ», որոնք «արժանի են» բռնության:
Եւս մի քանի օրինակ.

1. «Սեքսուալ բնույթի բռնի գործողություններից տուժած իմ վստահորդին զորամասասում զինծառայողներից մեկը մատնացույց է արել՝ ասելով, որ նա

բռնաբարված զինծառայող» է: Այս մասին Forrights-ի հետ զրույցում ասաց փաստաբան Հայարփի Սարգսյանը՝ իր մտահոգությունը հայտնելով, որ այդ իրավիճակը հոգեբանական ծանր ճնշում է հանդիսացել զինծառայող Կ-ի համար, որի արդյունքում վերջինս կրկին տեղափոխվել է զորամասի բուժկետ:
Հայարփի Սարգսյանը ստեղծված իրավիճակի մասով բողոք է ներկայացրել Գլխավոր դատախազություն.
[Զինծառայողին տեղափոխել են նույն զորամաս, որտեղ նա սեռական բռնության էր ենթարկվել]

2. Զինդատախազության երրորդ կայազորային բաժնում ավարտվել է N զորամասում առեղծվածային հանգամանքներում սպանված զինծառայող Նարեկ Ադիբեկյանի գործով նախաքննությունը: Երիտասարդի վրա կրակել են մարտական դիտակետում, 2017 թվականի դեկտեմբերի 11-ին, իհարկե, եթե հավատանք քննիչներին: Սակայն նախաքննական նյութերին ծանոթանալուց հետո անգամ այս տվյալը Ադիբեկյանների ընտանիքին պաշտպանող իրավաբանները բացահայտել են, որ զինծառայողին սպանել են, ապա նրա մարմինը քարշ տալով, բերել են ու նետել են դիտակետում: Սա միակ ցնցող փաստը չէր, որը քննիչները «չեն նկատել»:

Եւ այսպես, ըստ զինդատախազության ձեռք բերած տվյալների, սպանությունը կատարել է Մ.Մ-ն, որին սպանված զինծառայողը 3 ամիս շարունակ ծեծի ու սեռական բռնությունների է ենթարկել, հայհոյել ու ճնշել է: Մ. Մ.-ի համբերության բաժակը լցվել է, ու նա հերթապահության ժամանակ, երբ Նարեկի հետ մենակ է մնացել, իրեն ուղղված հերթական հայհոյանքը լսելով, բարկացել է ու 16 մենահատ կրակոցներով սպանել է Ադիբեկյանին: Վկաներ չկան: Մ. Մ-ն, ըստ նախաքննության նյութերի, մտավոր խնդիրներ ունի: Այս վարկածը առաջ է քաշվել հենց առաջին օրերին, գրվել է Մ. Մ-ի բառերից և նախաքննության ողջ ընթացքում չի փոխվել:
[Փաստաբանը գլխիվայր շուռ է տալիս բռնաբարված վրիժառուի վարկածը. Ադիբեկյանին սպանել են առնվազն երկուսով]
3. Արցախում դատում են ՊԲ Մարտակերտի շրջանի զորամասերից մեկում ծառայող երևանցի Կ-ին: Տղան մեղադրվում է քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով՝ զորամասի սպա Գ-ի նկատմամբ սուտ մատնություն կատարելու համար: Իրականում այս մեղադրանքը, ըստ Կ-ի մայրիկի, Կ-ի պատիժն էր: Նա համարձակվել էր մորը, այնուհետև նաև զորամասի ղեկավարությանը և քննիչներին հայտնել, որ սպան իրեն ծեծել է և պարբերաբար բռնաբարել է: Հայկական բանակն արատավորող այս խոստովանությունից հետո, որը տեղի էր ունեցել 2018թ. փետրվարին, ՀՀ քննչական կոմիտեի երրորդ կայազորային քննչական բաժնում քրեական գործ հարուցվեց Կ-ի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ իրականացնելու փաստով:
Դատական նիստի ժամանակ Կ-ն հայտնեց, որ իր մեղադրանքը չի ընդունում ամբողջությամբ: Զինծառայող Կ-ի մայրիկը վախեցած է որդու անվտանգության

համար: Նա հայտնեց մեզ, որ որդուն բռնաբարած սպան վատ կարծիքներ է տարածում իր որդու վերաբերյալ զորամասում: Նա պատմեց, որ պարբերաբար զինվորներ են գնում որդու մոտ և տհաճ միջադեպ են ստեղծում:
«Արա դու հրլը սա՞ղ ես, տես, քեզ ինչ ենք անելու» . բռնաբարված զինվորը դատարանի առաջ

ՊՆ-ն հանրությունից թաքցնում է մահվան դեպքերը

Tert.am-ը տեղեկություն տարածեց, որ մոտ երկու ամսվա ընթացքում ՀՀ զինված ուժերում և Արցախի Հանրապետության պաշտպանության բանակում զինծառայողներ են զոհվել, ինչի մասին ՊՆ-ն ու ՊԲ-ն չեն հայտնել: Մասնավորապես, Պաշտպանության նախարարությունը լռել է 4 զինծառայողի մահվան մասին, որոնք, ըստ պաշտոնական տեղեկության, գրանցվել են ծառայության հետ չկապված հանգամանքներում:

ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը, անդրադառնալով տարածված այս տեղեկությանը, հերքեց նախարարության կողմից զինծառայողի մահվան որևէ դեպք թաքցվելը, սակայն որևէ բացատրություն չտվեց, թե ինչու չի հայտարարվել 4 զինծառայողների մահվան մասին:

ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը նշեց, որ ծառայության հետ կապ չունեցող դեպքերը չեն հայտնել, բայց երբ այս կամ այն կերպ այն հայտնվել է, ՊՆ-ն հաստատել է:

«Հայտնել-չհայտնելը մի՛ խառնեք թաքցնել-չթաքցնելու հետ: Ծառայության հետ կապ չունեցող դեպքերը չենք հայտնել, բայց երբ այս կամ այն կերպ այն հայտնվել է, հաստատել ենք, դա չհայտնել չի նշանակում: Ո՞վ է ասել, որ դա առաջինը մեր կայքում պետք է դնենք, այդպիսի պարտավորություն ես չունեմ»,- հայտարարեց Հովհաննիսյանը:

Անդրադառնալով ՊՆ-ի կողմից հայտարարված այն տեղեկությանը, որ 4 զինծառայողների մահվան դեպքերը գրանցվել են ծառայության հետ չկապված հանգամանքներում, իրավապաշտպան Էդգար Խաչատրյանը շեշտեց՝ շատ դժվար չափելի է, արդյո՞ք մահվան դեպքը կապված է ծառայություն հետ, թե՝ ոչ.
«ՊՆ-ն հանրությունից թաքցնում է, թե իրականում ինչ է կատարվում բանակում»

Մինչ ՊՆ-ն ու նախարար Դավիթ Տոնոյանը փորձում են հասարակությանը համոզել, որ զինվորի մահվան մասին չհայտնելը դա թաքցնել չէ, և որ «պաշտպանության նախարարությունը չի պատրաստվում ոչ ծածկել, ոչ կոծկել որևէ դեպք, և դա չի արել տարիներ շարունակ», Նոր տարվա գիշերը հրազենային վիրավորումից մահացած

պայմանագրային զինծառայող Էդգար Գրիգորյանի այրին՝ 26-ամյա Արաքսյա Կարապետյանը, տարակուսանքով է հետևում նախարարի ու նախարարության հայտարարություններին ու ծառայողական քննություն անցկացնելու պատրաստակամությանը:

Բանն այն է, որ մինչ իր ամուսնու լուրը թաքցնելու առթիվ լրատվամիջոցներում աղմուկ բարձրանալը, տեսնելով, որ շաբաթներ են անցնում, իսկ ՊՆ-ն ձայն չի հանում իր զինվորի մահվան մասին, Արաքսյան խնդրում է Երևանում բնակվող մորաքրոջն այցելել ՊՆ, հանդիպել որևէ պաշտոնյայի հետ ու հարցնել, թե ինչու ՊՆ-ն չի հրապարակում ամուսնու մահվան մասին որևէ տեղեկություն:

«Բա 43 օր անցել ա էդ մարդու մահվանից, ոչ ՊՆ-ից զանգ, ոչ հրամանատարությունից զանգ, ոչ մի ցավակցություն պաշտոնավոր անձանց կողմից մեր տուն չի եկել, չեն զանգել»:

[«Բա սա ի՞նչ ա կոչվում, 1,5 ամիս անցել ա, թաքցնել չի՞». մահացած զինծառայողի այրին հակադարձում է Դավիթ Տոնոյանին]

Հիվանդ զինվորը <սիմուլյանտության զոհ>

Զինծառայողների եւ զորակոչիկների բավարար թվաքանակի ապահովումը բանակի հիմնական խնդիրներից մեկն է, որի պատճառով բանակ են զորակոչվում հաճախ հիվանդ կամ հոգեկան խնդիրներ ունեցող անձինք: Հրամանատարները խոստովանում են, որ ստիպված են իրենք իրենց «բուժզննումն» անցկացնել, առանձնացնել հիվանդ եւ խնդրահարույց զինվորներին եւ ապահովել դրանց համար հատուկ ռեժիմ: Սակայն միշտ չե նման վերաբերմունք դրսեւորվում: Այն դեպքերում, երբ հրամանատարի մարդկային հատկանիշները ցածր են, զինվորին մեղադրում են սիմուլյացիայի մեջ եւ պատժում:

Այս տարվա ընթացքում մեզ հայտնի է դարձել նման մի աղաղակող դեպքի մասին:

Պաշտպանության նախարարության կողմից սիմուլյանտ հայտարարված ու անմարդկային պայմաններում հոգեբուժարան հետազոտման ուղարկված, Էջմիածնի Զրառատ գյուղի բնակիչ, եզդի զինվոր Յուրիկ Բրոյանը, որը մոտ 5 ամիս չէր կարողացել խոսել՝ դողալով ու նյարդային շարժումներ անելով, երկու օր առաջ «Էրեբունի» հիվանդանոցում կարճատև բուժման արդյունքում խոսել է ու փաստաբանին պատմել, թե ինչ է եղել իր հետ:

«Բրոյանին մկանները թուլացնող ներարկում էր արվել, որ գլուխը չշարժի ու հնարավոր լինի տոմոգրաֆիկ հետազոտություն իրականացնել»,-պատմեց նրա փաստաբան Հայարփի Սարգսյանը, ում միջնորդությամբ էր Բրոյանը տարվել հիվանդանոց:

Բժիշկներն ասել են, որ նա բուժման կարիք ունի, մինչդեռ հոգեբուժարանում, որտեղ նա պահվում է հոգեկան հիվանդների հետ ընդհանուր պալատում, բուժում չի ստանում:

Փաստաբանի խոսքով՝ զինվորի ցնցումներն առաջացել են ռազմական ոստիկանությունում ստացած հարվածից հետո: Մինչ այդ էլ Յուրիկ Բրոյանն իր փաստաբանի հետ շփվել է ժեստերով: Նա դժվարությամբ է քայլում, ամբողջ մարմնով ցնցվում է: Եզդի երիտասարդին բանակ են զորակոչել անցյալ տարվա օգոստոսին:

[ՊՆ-ի կողմից սիմուլյանտ հայտարարված զինվորը միայն հանգստացուցիչի ներքո է կարողացել խոսել՝ պատմելով՝ ինչ է եղել իր հետ]

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում «Մարդու իրավունքների պաշտպանության կոալիցիա»-ի կողմից «Բանակում մարդու իրավունքների խախտումների և դրանց կանխարգելման մեխանիզմները» թեմայով հանրային քննարկման ժամանակ փաստաբան Հայարփի Սարգսյանի կողմից բարձրաձայնվեց ժամկետային զինծառայող Յուրիկ Բրոյանի առողջական վիճակի և զինվորական ծառայության հետ դրա անհամատեղելիության մասին:

Հանրային քննարկումից օրեր անց Ռազմական ոստիկանությունը ծառայողական քննություն է սկսել ընդունիչ-բաշխիչում Յուրիկ Բրոյանի նկատմամբ տեղի ունեցած դեպքի առթիվ: Արձագանքել է նաև Զինվորական դատախազությունը, որը վստահեցրել է՝ ներկայացված հաղորդումները քննարկվել են և պատշաճ կարգով քննություն կիրականացվի:

Մարտի 4-ին բացատրություն և հաղորդում է վերցվել Յուրիկ Բրոյանից: Վերջինս նույն օրը հարցաքննվել է նաև այն քրեական գործի շրջանակներում, որով ճանաչվել է որպես տուժող, մասնավորապես, զորամասում ծեծի ենթարկվելու, ինչպես նաև «Կանազ»-ի հոսպիտալում տեղի ունեցած անմարդկային վերաբերմունքի փաստերի շուրջ:

[Զինծառայող Յուրիկ Բրոյանի գործով կատարվում է բազմակողմանի քննություն՝ հանրային վերահսկողության արդյունքում]

«Զինծառայող Յուրիկ Բրոյանը սենյակ մտավ հազիվ քայլելով, գլուխը կախ՝ չկարողանալով բարձրացնել, պարբերաբար ցնցումների մեջ ընկնելով, հազիվ կարողացավ մոտենալ աթոռին: Նա չէր կարողանում խոսել, միայն գլխով դրական կամ բացասական պատասխան էր տալիս. Յուրիկը պարալիզացված էր»,- Forrights-ի հետ զրույցում հայտարարեց «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հասարակական կազմակերպության փաստաբան Հայարփի Սարգսյանը:

[«Զինծառայողը պարալիզավցած է. չի կարողանում խոսել, դժվար է քայլում եւ պարբերաբար ցնցումների մեջ ընկնում». փաստաբան]

Առողջական խնդիրներով զինվորական ծառայություն

Եւս մեկ աղաղակող երեույթի մասին հայտնի է դարձել վերջերս: Պարզվել է, որ գիշերամիզությունը հանվել է այն հիվանդությունների ցանկից, որոնք կարող են զինծառայությունից ազատելու պատճառ լինել: Հիմա այդ հիվանդությամբ

տառապողներին զինակոչում են, սակայն որպեսզի նրանք «վատ չզգան», իրենց տանում են հատուկ վաշտեր, որտեղ հատուկ ռեժիմ է հաստատված»
«Զինվորական ծառայության համար երիտասարդների պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը վերջին անգամ վերանայվել է 2018 թվականի ապրիլին: Պաշտպանության նախարարությունը մշակեց մի ծավալուն փաստաթուղթ՝ 103 հոդվածից կազմված: 2018 թվականի ապրիլի 12-ին ընդունվեց կառավարության N 404-Ն որոշումը՝ զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին, որը նախկին վարչապետ Կարեն Կարապետյանի ստորագրած վերջին որոշումներից մեկն էր: Այն սահմանափակեց բանակային ծառայության հետ անհամատեղելի հիվանդությունների ցանկը: Եթե նախկինում տվյալ արատը, ֆիզիկական, կամ մտավոր թերությունը, կամ հիվանդությունն ունեցող անձը միանշանակ ազատվում էր ծառայությունից, ապա այժմ մի շարք հիվանդությունների դեպքում զինծառայողը համարվում է <<սահմանափակումներով>> պիտանի ծառայության համար: Այդպիսի հիվանդություններից է գիշերամիզությունը, որի դեպքում նախկինում ազատվում էին բանակից, իսկ այժմ համարվում են ծառայության համար պիտանի՝ սահմանափակումներով:

Երիտասարդ տղաները, որոնք ունեն այս խնդիրը պաշտոնական տվյալներով մոտ երկու հարյուրից ավելի են: Ըստ փորձագետների՝ իրական թվերն ավելի մեծ են: Գիշերամիզությամբ տառապող երիտասարդների համար ոչ պաշտոնական տվյալներով 4 զորամաս է գործում՝ Սիսիանում, Գյումրիում, Երևանում, Հոյկտեմբերյանում, շուտով պատրաստվում են նաև Իջևանում բացել: Կան ծառայության վայրեր, որտեղ առանձնացված զորամասեր գիշերամիզությամբ տառապողների համար չկան: Հիվանդ երիտասարդները ծառայում են ընդհանուր զորամասում, բայց քնում են առանձին ննջարանում: Նրանք հիմնականում տարածք մաքրողներն են, որոնց մյուսները տարատեսակ ստորացուցիչ անուններ են դնում:
Ռազմական փորձագետ Վան Համբարձումյանը գտնում է, որ գիշերամիզությունը մեծ սթրես է բանակայինի համար, որը կարող է բերել ծայրահեղ հետևանքների:
«Մեր զորամասերում կա դեդովշչինա, թույլին ձեռք առնելու, ծաղրելու ավանդույթ, և նման երիտասարդները նվաստացնում են: Հիվանդներին զորակոչելու հետևանքով կտրուկ ավելանալու են ինքնասպանության, հոգեկան սահմանային վիճակներում հայտնվելու, դրանց հասցնելու դեպքերը: Նրանց ծառայությունն ընդհանրապես արդյունավետ չէ»:
Գիշերամիզությունը՝ որպես խարան զինվորի համար

Նույն Յուրիկ Բրոյանի գործը՝ վառ ապացույց է, որ լուրջ հիվանդությունը դեռ պատճառ չէ բանակից ազատելու:

Դեր չի խաղում նաև այն, որ զինվորը կաղալով է երդում տալիս:

«Շուրջ երկու ամիս ծնկի վիրահատության համար պայքարող զինվոր Վիրաբ Ավագյանին դուրս են գրել Մուրացանի հոսպիտալից: Մենիսկի վնասվածքով զինվորին դուրս են գրել առանց վիրահատություն անելու: Հոսպիտալի բժիշկներն այդպես էլ վիրահատության կարիք չեն տեսել: Մինչդեռ զինվորի ոտքի ցավերը, ինչպես պնդում է հայրը, ով կրկին եկել էր Forrights.am-ի խմբագրություն, չեն անցել. Երկու ամսվա դեղորայքային բուժումը արդյունք չի տվել: Այժմ Վիրաբն այդ վիճակով պետք է վերադառնա զինծառայության Մեղրու Ագարակի զորամաս:

Անցյալ տարվա զորակոչի ժամանակ Վիրաբին տարկետում էր տրվել հիվանդ ոտքի պատճառով, սակայն հետո առանց զորակոչիկին բուժելու ՊՆ-ն վերցրել, նրան բանակ էր տարել:

Կաղացող զինվորին դուրս են գրել հոսպիտալից առանց վիրահատելու ու ուղարկում են ծառայության

Զինակոչիկների հիվանդությունների ախտորոշումը դեռևս պատշաճ մակարդակի վրա չէ: Այդ մասին է վկայում քաղաքացի Վաղարշակ Տոնապետյանի երկու որդիների պատմությունը: Նրա երկու որդիներն էլ բանակ զորակոչվելիս առողջական խնդիրներ են ունեցել, ինչին ՊՆ ռազմաբժշկական հանձնաժողովը պատշաճ ուշադրություն չի դարձրել:

«Սկզբում որդուս ճանաչել են պիտանի, ուղարկել են բանակ, ապա, երբ որ վատացել է, ուղարկել են հոսպիտալ, հայտնաբերվել է թունավոր զոբը, որ ենթակա է բուժման, բայց զորացրելու ժամանակ գրել են, որ ծառայության հետ կապ չունեցող հիվանդություն է: Այսինքն՝ ամեն ինչ արել են, որ իրենց վրայից գցեն և զինվորական հաշմանդամի կարգավիճակ չտան: Բայց իրենք երկկողմանի իրենց գցել են կրակի մեջ՝ իրար հակասելով: ԿՈՌՀ-ին շնորհակալություն, որ նկատել է հիվանդությունը, բայց եթե չահազանգեինք, վստահ եմ, չէին ներկայացնի»,- ասաց Վաղարշակ Տոնապետյանը:

Շարունակում են բանակ զորակոչել առողջական խնդիրներ ունեցող երիտասարդներին

Մահեր ավտովթարից՝ մեքենաների անսարքություն և այլ պատճառներ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ներկայացնում է 2018 թ.-ին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) եւ Արցախի Հանրապետության /Լեռնային Ղարաբաղի/ (ԱՀ/ԼՂ) զինված ուժերում մահացության դեպքերի մասին տեղեկանքը:

Ընդգծենք, որ պաշտոնական երկու աղբյուրների՝ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ զինվորական դատախազության տվյալների համաձայն՝ մահացության 63 դեպքերից 38-ը կապված են զինվորական

ծառայության հետ, իսկ 25-ը՝ ոչ, մինչդեռ ՀՀ քննչական կոմիտեի տվյալներով՝ 50 զինծառայողի մահացության դեպքից 37-ն են կապված զինվորական ծառայության հետ, 13-ը՝ ոչ:

Հաշվի առնելով այն, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակին ոչ պաշտոնական աղբյուրներից հայտնի են դարձել մահվան 47 դեպքերը միայն, արձանագրում ենք, որ 63 դեպքերից միայն 47-ի մասին է տեղեկատվություն տարածվել, ընդ որում՝ դրանցից միայն 37-ի վերաբերյալ է առաջնային աղբյուր եղել պաշտոնական աղբյուրը:

Նկատենք, որ 2018 թ.-ին հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով զոհերը 7-ն են, իսկ ոչ մարտականը՝ 56-ը: Ոչ մարտական մահացությունների թվում մեծ թիվ են կազմում ավտովթարի հետեւանքով մահացությունները /17/, առողջական խնդիրներով պայմանավորված մահացությունները /13/ եւ ինքնասպանություններ որակված դեպքերը /11/:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ներկայացրել է 2018 թ.-ին ՀՀ եւ ԼՂՀ զինված ուժերում մահացության դեպքերի մասին տեղեկանքը:

Կարելի է եզրակացնել, որ զինված ուժերում պատշաճ ուշադրություն չի դարձվում ավտոմեքենաների շահագործման կանոնների պահպանմանը, մեքենաների շահագործման տեխնիկական պահանջներին, որոշ դեպքերում նաև վարորդների պատրաստվածությանը:

Իսկ այն, որ մահացության ամենատարածված երկրորդ պատճառը առողջական խնդիրներն են, գտնում ենք, որ պայմանավորված է զինված ուժերում բժշկական ծառայության ապահովման խնդիրներով, նաև առողջական խնդիրներով երիտասարդների զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելու փաստերով:

Համեմատության համար նշենք, որ 2017 թ.-ին ՀՀ գլխավոր դատախազության տվյալներով գրանցվել է մահացության **76 դեպք,** որոնցից **23-ը** տեղի է ունեցել հրադադարի ռեժիմի խախտման, **10-ը՝** ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, **16-ը** առողջական խնդիրների հետեւանքով, **4-ը՝** ականի պայթյունի, **8-ը՝** սպանության (4-ը՝ դիտավորյալ, 4-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտման), **6-ը՝** դժբախտ պատահարի (1-ը՝ շմոլ գազից թունավորման, 1-ը նռնակի պայթյունի, 1-ը՝ վրաերթի, 3-ը՝ հայտնի չէ), **9-ը՝** ավտովթարի:

Ինչպես տեսնում ենք, 2017 թ.-ի համեմատ 2018 թ.-ին հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով մահացության դեպքերը նվազել են մոտ երեք անգամ (16-ով), սպանություն որակված եւ առողջական խնդիրների հետեւանքով մահացության դեպքերի թիվը նվազել է 3-ով, 1-ով աճել է ինքնասպանություն որակված դեպքերի թիվը, իսկ ավտովթարի հետեւանքով մահացության դեպքերի թիվն աճել է 8-ով (մոտ երկու անգամ):

Մի քանի դեպք.

Գեղարքունիքի մարզի Կախակն գյուղի մոտակայքում քաղաքացի Մ. Հ.-ն (1994 թ.) մնացել է ձնահյուսի տակ: Պարզվել էր, որ նա պայմանագրային զինծառայող էր:

Զնահյուսի տակ մնացած պայմանագրային զինծառայողին մահացած են գտել

Նոյեմբերի 7-ին Գորիս-Որոտան (Կուբաթլի) ավտոճանապարհի 39 կմ հատվածում ՊՆ բեռնատարի շրջվելու արդյունքում չորս զինվոր էր մահացել: Կային նաև վիրավորներ:

«Նախարարի հրամանով զինվորական ծառայությունից ազատվել են 1-ին տանկային վաշտի տանկային դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Գ.Մ.-ն, ՀՀ ՊՆ N զորամասի ավտոմոբիլային ծառայության պետ մայոր Մ.Ա.-ն, ՀՀ ՊՆ N զորամասի 4-րդ զրահատանկային գումարտակի հրամանատարի սպառազինության գծով տեղակալ Կապիտան Շ. Ա.-ն, ՀՀ ՊՆ N զորամասի 4 զրահատանկային գումարտակի նախկին հրամանատար մայոր Ս.Բ.-ն:

ՊՆ բեռնատարի վթարի դեպքով աշխատանքից ազատվել եւ նկատողություն են ստացել մի շարք զինվորականներ

Պաշտպանության բանակի պայմանագրային զինծառայող, Ստեփանակերտի բնակիչ Արմեն Հովակիմյանը (1982 թ.) և Մարտակերտի բնակիչ Արամ Սարգսյանը (1975 թ.) ջրահեղձ են եղել «Խաչեն»-ի ջրամբարում լողալիս, տեղեկացնում են Արցախի ԱԻՆ լրատվական ծառայությունից:

Արցախում պայմանագրային զինծառայողը ջրահեղձ է եղել. Արցախի ԱԻՆ

Բաց նամակ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանին

Հարգելի պարոն Տոնոյան, ես զինվորի մայր եմ: Որդուցս բացի ոչ մեկը չունեմ այս աշխարհում: Հունվարին որդիս զորակոչվել է բանակ՝ Արցախ: Ուրախությամբ եմ ճանապարհել: Զորակոչվելուց չորս օր հետո, սակայն որդիս զանգահարում և օգնություն էր խնդրում ինձանից: Նա զորամասում բռնության էր ենթարկվել: Բռնության ենթարկողները մինչև հիմա անպատիժ են: Հարուցվեց քրեական գործ և արդեն սկսվել է դատական գործընթաց: Որդիս այս ամբողջ ընթացքում՝ 8 ամիս, գտնվել է Ռազմական Ոստիկանությունում. նախ՝ տուժողի, ապա՝ մեղադրյալի կարգավիճակում: Որդիս գտնվել և ներկայում էլ գտնվում է հոգեբանական ծանր վիճակում: Նա իրեն անպաշտպան է զգում և ես էլ նրա հետ միասին անցնում եմ շատ դժվար օրեր:

Նշեմ նաև, որ որդիս տառապում է տարբեր հիվանդություններով: Նա պիտի ազատվեր զինվորական պարտականություններից կամ արձակուրդ տրամադրվեր նրան, և միայն բուժումից հետո կարող էր ճանաչվել պիտանի զինվորական ծառայությանը:

Պարոն նախարար, հույս ունեմ, որ կմիջամտեք և անհապաղ լուծում կտաք որդուս Հայաստան տեղափոխելու հարցին և երաշխիքներ կտաք նրա անվտանգության հետ կապված խնդրին, հակառակ դեպքում՝ ողջ պատասխանատվությունը մնում է ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարների վրա:

Պարոն նախարար, որդուս ծառայությունն անվտանգ դարձրեք

Մահվան դեպքերը չեն բացահայտվում, քննչական մարմինները, համակարգը չի փոխվում

Խորհրդային անցյալի կրողների գերակշռությունը համակարգում եւ «ազգային» քրեականացված օրենքների տարածումը դժվարացնում է արմատական փոփոխությունների իրականացումը նույնիսկ հեղափոխությունից հետո: ՀՀ իրավապահ համակարգը եւս խորհրդայինի ժառանգորդն է, ինչը դրսևորվում է քրեական գործերի մինչդատական եւ դատական քննության ընթացքում:

Հրամանատարական բոլոր օղակներում դեռ պահպանվում է քրեական մտածելակերպը: Շարքային կազմը եւս շարունակում է ապրել քրեական աշխարհի օրենքներով:

«Բանակում մարդու իրավունքների խախտումների և դրանց կանխարգելման մեխանիզմները» թեմայով քննարկման ժամանակ ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը կարևորեց բանակում հանցագործությունների բացահայտումը.
«Հասնելու ենք նրան, որ մեկ զինվորի մահը պետության համար դառնալու է խնդիր»,- ասաց նա, վստահեցնելով, որ ոչ մի հանցագործություն չի կոծկվելու:
Անդրանիկ Քոչարյանը քննարկման ներկաներին կոչ արեց, որ բանակը միայն հանցագործությունների պրիզմայով չնայեն, քանի որ բանակն ունի լուրջ ձեռքբերումներ թե՛ կադրերի պատրաստման, թե՛ սպառազինության:
«Հասնելու ենք նրան, որ մեկ զինվորի մահը պետության համար դառնալու է խնդիր». Անդրանիկ Քոչարյան
Մինչդեռ չեն բացահայտվել նույնիսկ մի քանի տարի առաջ կատարված դեպքերը:
«2015թ. հունվարի 28-ի լույս 29-ի գիշերը Վազգեն Սարգսյան ռազմական ինստիտուտում առանձնակի դաժանությամբ սպանված կուրսանտ Հայկազ Բարսեղյանի գործով դատական նիստը՝ պարբերաբար հետաձգումներից հետո, վերսկսվեց:
Հիշեցնենք, որ Հայկազ Բարսեղյանը սպանվել է 2015-ի հունվարի 29-ին՝ Վազգեն Սարգսյան ռազմական ինստիտուտում: Այդ օրն առավոտյան նրա մարմինը հայտնաբերվել է ֆիզիրապարակի պտտաձողից կախված: Սպանության համար քննություն իրականացնող մարմինը մեղադրանք է առաջադրել Բարսեղյանի ծառայակից 4 կուրսանտի՝ Վաչե Սահակյանին, Մովսես Ազարյանին, Նորիկ Սահակյանին և Գնել Թևոսյանին: Ըստ մեղադրանքի՝ ամբաստանյալները Հայկազին սպանել են, ապա ինքնասպանության տպավորություն ստեղծելու համար նրան տարել ու կախել են պտտաձողից:
Սպանված կուրսանտի գործով փորձագետներն «ինքնասպանության մասին» գրությունն ավելի շատ մեղադրյալի ձեռագրին են նմանեցնում

«6 երեխաների մայր Նունե Հակոբյանը միակ տղային՝ Հրանտ Մանգասարյանին, մեկ տարի առաջ կորցրել է բանակում. 2017-ի նոյեմբերի 4-ին Հրանտը մահացել է ականի պայթյունից Մարտակերտի զորամասի պահեստում՝ իր մարմնով փակելով հակատանկային ականը:
Մայրը՝ Նունե Հակոբյանը, ամիսներ շարունակ չի կարողանում հանդիպել պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի հետ իր խնդիրը նրան ներկայացնելու համար:
Հրանտին հետմահու պարգևատրել են «հայրենիքի սահմանները պաշտպանելիս անձնվիրության և խիզախության համար», սակայն «Զինծառայողների աջակցության հիմնադրամից» ընտանիքին փոխհատուցում չեն տալիս՝ առանց հստակ պատճառաբանություն տալու: Նշենք, որ այդ հիմնադրամից սահմանների պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողներին 58 մլն դրամ փոխհատուցում է տրվում. 10 մլն-ն միանվագ, մնացածը՝ տարիների ընթացքում:
Գ. Հյուսնունցին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 374-րդ հոդվածով: Քրեական գործով ավելի վաղ մեղադրանք էր առաջադրվել նաև զորամասի հրթիռահրետանային սպառազինության ծառայության պետ Ա. Գրիգորյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով:
«Իմ տղան իր կյանքով պահեստը փրկել է պայթյունից, բայց նրա սխրանքը չի գնահատվում». Դավիթ Տոնոյանը 7 ամիս չի ընդունում զինվորի մորը

2018թ. նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը ՀՀ Քննչական կոմիտեի նախագահ Հայկ Գրիգորյանի հետ հանդիպել է մահացած զինծառայողների հարազատների հետ:

Կառավարության ղեկավարը լսել է զինծառայողների հարազատների բարձրացրած խնդիրներն ու մտահոգությունները քրեական գործերի քննության և դատավարության ընթացքի վերաբերյալ:
Տուժող կողմի ցանկության դեպքում, գործող օրենսդրության շրջանակներում, քննարկումներ տեղի կունենան նաև Քննչական կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծված հասարակական մոնիթորինգի խմբի աշխատանքների շրջանակում:
ՀՀ քննչական կոմիտեի նախագահը հանդիպել է մահացած զինծառայողների հարազատներին

«Իշխանափոխությունից հետո նոր պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը զեկուցեց հանրությանը, որ մայկա-տրուսիկի հարցը լուծված է, նոր ներքնաշորեր են գնել բանակի համար: Այն ժամանակ, հեղափոխության առաջին ամսում թվում էր, թե իրավիճակը բանակում շատ արագ կարգի են բերելու, զինվորների մայկա-տրուսիկի հարցից հետո այլ թեմաների կանցնեն, օրական մեկ քայլ առաջ կգնանք, կվերանան քրեածին բարքերը հայկական երկու բանակներում, բայց փոփոխությունները, եթե անգամ եղել են, տեսանելի չեն:

«Բանակը քսան տարի թալանած սերմնացու գողացող մկներ, — դիմում է «Իմ քայլը» դաշինքի թեկնածուն իր հանրապետական հակառակորդներին, — Դուք դեռ բարոյական իրավունք ունե՞ք բանակի մասին խոսել: Դուք, որ մեր զինվորին նույնիսկ մայկա-տրուսիկով չեք կարողացել ապահովել: Էս հանրապետականներին պետք է բոլորին բռնել և ստիպել, որ նրանք մի շաբաթ ուտեն էն, ինչ որ դրվում է մեր զինվորների սեղանին, մեր դիրքերում ծառայող զինվորներին պետք է մի շաբաթ կերցնել դա ու ասել, ձեններդ կտրեք, ծպտուն չհանեք բանակի մասին»:
Զինվորների ծնողների համար, որոնց հետ Forrights.am-ը զրուցել է, «Փի Ար» բանավեճից ավելի արդիական է բանակի այսօրվա վիճակը: Նրանք նշում են, որ հիմա էլ բանակի մատակարարման և հատկապես «մայկա-տրուսիկի» հարցը լուծված չի, տանից գուլպա և ներքնաշորեր են ուղարկում բանակ:
Պատմում է բանակայիններից մեկը, ով կարճատև արձակուրդ էր եկել տուն՝ Երևան. «Տաքսու վարորդը ինձ ոգևորված ասեց՝ ապեր, լավ ա, չէ՞, «վլաստը» փոխվել ա, «սալդատին» լավ են նայում, չէ՞, էլ տանից բան չես տանի: Ասեցի՝ չէ, էլի ամեն ինչ տնեցիներն են ուղարկում: Զարմացավ»:
«Ղ- տելեկոմը» ուղղակի թալանում է բանակայինների ծնողներին, այնպիսի տարիֆներ են սահմանված: Եթե «Վիվա»-ն, կամ «Բի-լայնը» մենք Հայաստանում լիցքավորում ենք 1000-1500 դրամով ու կարողանում ենք մի ամիս խոսել, ապա այնտեղ այդ 1000 դրամը սպառվում է 1 շաբաթում»:

Բանակի թեման շահարկումների առարկա է, իսկ զինվորների կյանքում ոչինչ չի փոխվում

«Բանակում ինքնասպանություն որակված դեպքերը միշտ կասկածելի են: Ամիսներ առաջ Նիկոլ Փաշինյանը նշում էր, որ խիստ հետաքրքրված է բանակով, բայց ես նկատում եմ՝ այս պահին ներկայիս կառավարության համար առաջնահերթություն չի բանակում զինծառայողների իրավունքները: Ինձ շատ է զարմացնում, որ բանակն իշխանությունների ուշադրության կենտրոնում չի հայտնվում այդպես էլ»,- հրավիրված ասուլիսի ժամանակ հայտարարեց «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ իրավապաշտպան Ժաննա Ալեքսանյանը:
Հունվար ամսից մինչ օրս ՀՀ զինված ուժերում և ԼՂՀ ՊԲ-ում գրանցվել է զինծառայողների մահվան 35 դեպք: Նրանց հարազատների մոտ այս պահին շատ անպատասխան հարցեր են առաջացրել, որոնց շուրջ սպառիչ պատասխաններ չի տալիս ո՛չ Պաշտպանության նախարարությունը և ո՛չ էլ Քննչական ծառայությունը: Հայտնի դարձած մահվան դեպքերից 2-ը՝ սպանություն է որակվել, իսկ 9-ը՝ ինքնասպանություն: Իրավապաշտպանը նշում է, որ ինքնասպանություն որակված դեպքերը միշտ կասկածելի են:

Ասուլիսին ներկա էին նաև մահացած զինծառայողների ծնողներն ու հարազատները: Ողջ ասուլիսի ժամանակ նրանք չէին կարողանում զսպել իրենց հուզմունքը և պարբերաբար ընդհատում էին բանախոսներին:
ՀՀ պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի պետ, գնդապետ Ալեքսանդր Ավետիսյանը, անդրադառնալով նմանօրինակ մի շարք բողոքների, նշեց, որ Պաշտպանության նախարարությունն իրավունք չունի միջամտելու քննչական գործողությունների, որևէ որակում տալ չի կարող:
«Կիսամյակի կտրվածքով ՊՆ-ի «Թեժ գիծ»-ը ստացել է 16.000-ից ավել հեռախոսազանգ, որոնք ամենատարբեր խնդիրներին են առնչվում: Մենք ուսումնասիրում և մոնիթորինգ ենք անցկացնում ու ըստ դրա որոշում, թե որ զորամասում որ խնդիրն է առաջնային: Մնացած հարցերում ՊՆ-ն որևէ առնչություն չունի: Մահվան դեպքերի քննությամբ մենք չենք զբաղվում, դա մեր գործառույթի մեջ չի մտնում»,- հայտարարեց Ավետիսյանը:
«Ներկա պահին կառավարության համար առաջնահերթություն չէ բանակում զինծառայողների իրավունքները»
Սակայն իրավապաշտպանների ջանքերով հնարավոր է լինում հասնել որոշ արդյունքների:
«Շարքային Գևորգ Հարոյանի մահվան դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործով կատարված բազմակողմանի քննության արդյունքում տվյալներ են ձեռք բերվել զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ կրտսեր սերժանտի կողմից Գ. Հարոյանի նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ:
Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:
Գևորգ Հարոյանի մահվան դեպքով ձերբակալվել է վաշտի հրամանատարը

Forriaghts կայքը փորձել է ի մի բերել այն փոփոխությունները, որոնք նկատելի են հեղափոխությունից հետո:

Հեղափոխությունից հետո զինվորական որոշ գործերով դրական փոփոխություններ են արձանագրվել: Մի քանի մահացած զինծառայողի մահվան դեպքով մեղադրանք է առաջադրվել բարձրաստիճան զինվորականների: Այսպես օրինակ՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ին հակառակորդի գնդակից մահացած Չապլին Մարգարյանի մահվան գործով մեղադրանք է առաջադրվել դիրքի պատասխանատու սպային: Քննչական կոմիտեի տվյալներով՝ բարձրաստիճան սպան պարտավոր է եղել հակառակորդի կողմից խոցելի հատվածներում ինժեներական աշխատանքներ

իրականացնել միայն օրվա վատ տեսանելիության պայմաններում, սակայն չի պահպանել նշված պահանջները:
Իսկ ի՞նչ ենք անում մենք՝ «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» իրավապաշտպան կազմակերպությունը, ինչպե՞ս ենք օգնում պետությանը զինծառայողների իրավունքները պաշտպանված դարձնելու գործում: Արդեն 10 տարի մեր գործունեությունը պետության և հասարակության աչքի առաջ է: Մեզ հիշում և գնահատում են որդեկորույս ծնողները: Եվ այն, որ զինծառայողներն ու նրանց հարազատները շարունակում են դիմել մեզ, նշանակում է՝ վստահում են և որոշակի հույսեր կապում: Մեր նշանաբանն է՝ պետության հետ համագործակցությամբ ունենալ առավել պաշտպանված զինծառայող:
Ներկայացնենք, թե ինչ ենք արել վերջին 8 ամսում և ինչ հաջողության պատմություններ ենք արձանագրել: 2017 թվականի հոկտեմբերից սկսած մենք այցելել ենք Զինված ուժերում մահացած կամ դժվարին իրավիճակներում հայտնված մի քանի տասնյակ զինծառայողների ընտանիքներ: Որոշ դեպքերում ստանձնել ենք տուժողների պաշտպանությունը: Ընթացիկ խնդիրներով խորհրդատվություն ենք տրամադրել մոտ մեկ տասնյակ զինծառայողների:
Ստորև ներկայացնենք մեր հաջողության պատմությունները:

Զարհուրելի դեպք. սպան բռնաբարել է զինծառայողին

Զինծառայող Կ.-ի բռնաբարության դեպքը թերևս ամենադրամատիկ և ծանր գործն է, որով զբաղվում է մեր կազմակերպությունը: 2018թ. սկզբին մենք տեղեկություն ստացանք, որ սպան բռնաբարել է նորակոչիկ Կ.-ին: Զինվորական երդման արարողությունից օրեր անց զինվորը զանգահարել է մորն ու օգնություն խնդրել, մորը պատմել իրողությունը: Բռնաբարությունը կրել է պարբերական բնույթ՝ սպան նորակոչիկին փաթաթել է «աղյալի» մեջ, ծեծել ու բռնաբարել: Մեր կազմակերպության փաստաբան Հայարփի Սարգսյանը ներկայացնում է զինվորի շահերը: Իրավաբանական աջակցություն ենք ցուցաբերում նաև մորը: Կ. -ին նախ՝ ճանաչել են տուժող, զորամասից տեղափոխել են Ռազմական ոստիկանություն, ապա՝ նրան ճնշելով՝ ստիպել են ցուցմունքը փոխել, թե ինքը սուտ մատնություն է կատարել՝ սպային հանիրավի մեղադրելով բռնաբարության մեջ: Գործն այժմ մտել է դատական փուլ, մենք շարունակում ենք պաշտպանել զինծառայողի իրավունքները: Կապ ենք պահպանում նաև ՀՀ Պաշտպանության նախարարության համապատասխան մարմինների հետ՝ զինծառայողի անվտանգության, հետագա ծառայության կարգավիճակի հարցերով: Ներկայումս նույն հանգամանքների շուրջ հարուցվել է ևս մեկ քրեական գործ, որով Կ. -ն ճանաչվել է տուժող, կատարվում է նախաքննություն:

Ապրիլյան պատերազմի հերոս Անդրանիկ Մկրտչյանի կասկածելի մահը

2017 թվականի օգոստոսի 20-ին Մեղրիի զորամասի հետախուզական վաշտի հրամանատար Անդրանիկ Մկրտչյանի մարմինը գտնվել է վաշտի սենյակներից

մեկում։ Նախաքննական մարմինը գործը քննում է ինքնասպանության հասցնելու հոդվածով։ Սակայն մեր կողմից կատարվող զուգահեռ քննությունը, ձեռք բերված փաստերը վկայում են, որ կատարվածն իրականում սպանություն է։ Կազմակերպության փաստաբան Հայարփի Սարգսյանը քրեական գործով ներկայացնում է տուժողի իրավահաջորդի շահերը։ Պայքարում ենք բացահայտելու ճշմարտությունը և պատասխանատվության ենթարկելու իրական հանցագործներին։ Վերջերս էլ փաստաբան Հայարփի Սարգսյանի առարկության և բողոքների արդյունքում հանցակազմի բացակայության հիմքով կարճվեց հետմահու Անդրանիկ Մկրտչյանի դեմ հարուցված քրեական գործը, ըստ որի՝ նրա ծառայողական բնակարանում անօրինական փամփուշտներ էին հայտնաբերվել, կապիտանը հետմահու արդարացվեց։

Կրակոցներ թիկունքից և անհետացած փամփուշտներ

21-ամյա զինծառայող Նարեկ Ադիբեկյանը մարտական հենակետում սպանվել է թիկունքին արձակած կրակոցներից։ Դեպքը տեղի է ունեցել 2017 թվականի դեկտեմբերի 11-ին։ Ըստ քննության տվյալների՝ սպանության հեղինակը՝ համածառայակից Մ. Մ.-ն, 16 կրակոց է արձակել և սպանել։ Զինծառայողի իրավահաջորդի շահերը ներկայացնում է փաստաբան Հայարփի Սարգսյանը։ Պատմության օբյեկտիվ պատկերը ստանալու համար այցելեցինք նաև սպանության մեջ կասկածվող Մ. Մ.-ի ընտանիքին։ Դատաբժշկական փորձաքննության տվյալներով զինծառայողը ենթարկվել է անմարդկային վերաբերմունքի՝ բռնաբարվել և խոշտանգվել է։ Հետո՝ սպանության մեղքը դրվել է նրա վրա։ Նարեկ Ադիբեկյանի իրավահաջորդի ներկայացուցիչ փաստաբան Հայարփի Սարգսյանը կասկածի տակ է առնում սպանության պաշտոնական վարկածը։ Ուսումնասիրելով փորձագիտական եզրակացությունները, հայտնաբերել է, որ քննիչները փորձագետներին ներկայացված փաթեթից հանել են դրա վրա նշված պարկուճը, որից կարելի էր որոշել, թե ում զենքից է այն կրակվել, և այն փոխարինել են փամփուշտով։ Դեպքի վայրում կրակել է ոչ միայն Մ. Մ-ն, այլ նաև մահացած Ադիբեկյանը, կամ ևս մեկ այլ անձ, կամ անձինք։ Առնվազն 6 պարկուճ նախաքննական մարմնի կողմից պարտակվել է։ Հայարփի Սարգսյանը բողոք է ներկայացրել քննիչի դեմ։ Ներկայումս նշված քրեական գործը մեղադրական եզրակացությամբ և թերի քննությամբ ուղարկվել է դատարան։ Այս գործով քննությանը զուգահեռ մենք լրագրողական հետաքննություն ենք անցկացնում։

Բռնություն՝ Ռազմական ոստիկանության բաժանմունքում

2018թ. հունվար ամսին մեր կազմակերպություն է դիմել Արցախի Ասկերանի զորամասի պայմանագրային զինծառայող Էդգար Հակոբյանը՝ հայտնելով, որ Ստեփանակերտի ռազմական ոստիկանության աշխատակիցներն իրեն մի քանի անգամ ծեծի են ենթարկել։ Մեր տեսանյութում զինծառայողը պատմում է, որ ՌՈ

բարձրաստիճան աշխատակիցը մի քանի անգամ ուժգին հարվածել է իր երիկամներին, հետո դուրս են բերել շենքից և ստիպել ծնկի գալ շարահրապարակում: Այնուհետև պետն իր աշխատակցին հրահանգել է ոտքով հարվածել Էդգարին՝ մինչև շարահրապարակի վերջնամասը ծնկների վրա քայլեցնելով:

Հակոբյանի պնդմամբ՝ իրեն հայհոյանքներ են հասցրել զորամասի սպաներ: Մեր հրապարակած հոդվածի և մեր կազմակերպության փաստաբան Հայարփի Սարգսյանի կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա հունվարի 25-ին Քննչական կոմիտեն քրեական գործ հարուցեց ՀՀ Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի և 360-րդ հոդվածի 2-րդ մասերով: Դեռևս ընթանող նախաքննության շրջանակում մեր փաստաբան Հայարփի Սարգսյանը ներկայացրել է Էդգար Հակոբյանի շահերը:

Ականի պայթյունը խլեց 3 զինծառայողի կյանք, վիրավորվեց ևս 1-ը

Զոհեր կարող էին չլինել, եթե ական տեղադրելու առաջադրանքը կատարող պատասխանատու սպան լավ պատրաստված լիներ, և գործողությունը գլխավորեր փորձառու սպա: 2017 թվականի նոյեմբերի 21-ին Մարտակերտի զորամասի պահպանության դիրքում ականի պայթյունից մահացան սպա Գեղամ Զաքարյանը, ժամկետայիններ Սարգիս Մելիքյանը և Սարգիս Աբրահամյանը, ծանր վիրավորում ստացավ հետախույզ Նարեկ Հովեյանը: Մենք սկսեցինք հետաքննել այս դեպքը: Այցելեցինք զոհված բոլոր զինծառայողների տուն՝ Մասիս, Վարդենիս, Մուսալեռ, լսեցինք հարազատներին, Երևանում հանդիպեցինք նաև Նարեկի մորը:

Արժեքավոր տեղեկություններ ստացանք մեր աղբյուրներից: Վիրավորված Նարեկ Հովեյանը, որը հետախույզ էր, չէր ունեցել սակրավորի կրթություն: Մահացած և վիրավոր զինծառայողների ծնողները մեզ ասում էին՝ ականի պայթյունը չէր լինի, եթե գործողությունը չղեկավարեր անփորձ սպան, և իրենց որդիները համապատասխան հմտություններ, հանդերձանք ու սարքավորումներ կրեին: Մեր այս քննադատությունը հետագայում հաստատվեց նախաքննությամբ:

Հունիսի 19-ին Քննչական կոմիտեն հայտնեց, որ Քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել Մարտակերտի զորամասի ինժեներական ծառայության պետին: Նա, ըստ ՔԿ-ի, ծառայության նկատմամբ դրսևորել է անփույթ վերաբերմունք, չի կատարել իր վրա դրված պարտականությունները, ինչի հետևանքով աշխատանքները մանրակրկիտ պլանավորված և կազմակերպված չեն եղել:

«Ինժեներական աշխատանքներն իրականացվել են հանպատրաստից, այդ թվում՝ անձնակազմը չի տիրապետել ականապայթյունային միջոցների նյութական մասին, առաջադրված խնդրի կատարման կարգին, անվտանգության կանոններին և չի ունեցել ականապատման և ականազերծման միջոցների հետ վարվելու գործնական հմտություններ, մարտական վիճակում գտնվող հակատանկային ականները հանվել

են ձեռքով՝ սուր ծայրով բահի միջոցով և տեղափոխվել ձեռքով, ականադաշտի տեղազննում չի իրականացվել, ականորսիչներ, ճանկիչներ և շոշափիչներ չեն օգտագործվել:

Արդյունքում՝ 2017թ. նոյեմբերի 21-ին՝ ժամը 18:35-ի սահմաններում, N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքում ինժեներական աշխատանքներ կատարելիս, հակատանկային ականի պայթյունի հետևանքով պայթյունաբեկորային մահացու վիրավորումներ են ստացել նույն զորամասի երեք զինծառայող, ևս մեկը՝ վիրավորվել»,- ասվում է Քննչական կոմիտեի հաղորդագրությունում:

Հարկ է նշել, որ ի սկզբանե քրեական գործ էր հարուցվել ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 4-րդ մասով, այն է՝ զենքի, ռազմամթերքի եւ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ: Այս հոդվածը ենթադրում է, որ նախաքննական մարմինը ականի պայթյունի մեղավորին փնտրում էր մահացած կամ վիրավոր զինծառայողների շրջանում:

Փաստորեն՝ ի սկզբանե նախաքննական մարմինը խնդիր չէր դրել հայտնաբերել գործողության պատասխանատու բարձրաստիճան սպային: Գործի քննության ինչ-որ մի փուլից սկսած նախաքննական մարմինը սկսել է օբյեկտիվ քննություն կատարել: Վստահաբար, դեպքի համակողմանի լուսաբանմամբ մենք մեր փոքրիկ ներդրումն ենք ունեցել այսպիսի արդյունքի համար: Որպես հավելյալ տեղեկություն նշենք, որ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի որոշմամբ՝ 10-ական միլիոն ՀՀ դրամ միանվագ և 20 տարի շարունակ յուրաքանչյուր ամիս 200 000-ական ՀՀ դրամ փոխհատուցում է տրամադրվել զոհվածների ընտանիքներին և 1-ին կարգի հաշմանդամ Նարեկ Հովեյանին: Դեռևս չբացատրված պատճառներով պետությունը փոխհատուցում չի տրամադրել սպա Գեղամ Զաքարյանի ընտանիքին:

Նռնակը պայթել է զենքի պահեստում

Դժբախտ ելքով այս պատահարը կարող էր տեղի չունենալ, եթե զորամասում կարգապահության բարձր մակարդակ գոյություն ունենար: 2017 թվականի նոյեմբերի 4-ին Մարտակերտի զորամասի զենքի պահեստից պայթյունի հզոր որոտ էր լսվել: Հակատանկային նռնակի պայթյունը խլել էր ժամկետային զինծառայող Հրանտ Մանգասարյանի կյանքը, վիրավորվել էր ևս 7 զինծառայող: Քրեական գործ էր հարուցվել ՀՀ Քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով: Փաստաբան Հայարփի Սարգսյանը հարուցված քրեական գործում ներգրավվել է որպես Հրանտ Մանգասարյանի իրավահաջորդի շահերի ներկայացուցիչ: Սույն քրեական գործով նախաքննությունն ավարտվել է, գործն ուղարկվել է դատարան:

Դեռ ամիսներ առաջ նախաքննության ընթացքից դժգոհ էր Հրանտի մայրը: Նունե Հակոբյանը քննիչի հետ զրույցներից եզրակացրել էր, որ փորձ է արվում նռնակի պայթյունի մեղքը գցել իր որդու վրա: Հայաստանում քաղաքական իրավիճակի

փոփոխությունը դրական հունով փոխեց այս գործի նախաքննությունը: Հունիսի 20-ին Քննչական կոմիտեն տեղեկացրեց, որ այս գործով մեղադրանք է առաջադրվել զորամասի հրթիռահրետանային սպառազինության ծառայության պետ Ա. Գրիգորյանին, որը ծառայության նկատմամբ ծանր հետևանքներ առաջացրած անփութություն է դրսևորել:

Նոյեմբերի 4-ին՝ կեսօրին մոտ, պահեստ են մուտք գործել շարքայիններ Հրանտ Մանգասարյանը և Սերգեյ Ալումյանը, ովքեր Գևորգ Հյուսնունցի հետ միասին մասնակցել են նռնակների քանդման աշխատանքին, որի ընթացքում՝ ժամը 12:00-ի սահմաններում, տեղի է ունեցել հակատանկային նռնակի պայթյուն, ինչի հետևանքով մարմնի տարբեր մասերում ստացած պայթյունաբեկորային վիրավորումներից Հրանտ Մանգասարյանը տեղում մահացել է: Ուշագրավ է, որ Հրանտ Մանգասարյանը դիպուկահար էր և չպիտի գտնվեր հակատանկային նռնակների պահեստում, ավելին՝ այդ նռնակները ոչ մարտական վիճակի բերելու պարտականություն նա չուներ:

Մենք ուշադրության տակ ենք պահելու այս գործի քննությունը և պաշտպանելու ենք տուժող Հրանտ Մանգասարյանի իրավահաջորդի շահերը: 2018-ին ականի պայթյունների դեպքերը նվազել են. Պաշտպանության նախարարության հրապարակած տվյալներով՝ 2016 և 2017 թվականներին ՀՀ և ԼՂՀ Զինված ուժերում ականի պայթյունից մահացել է 6 զինծառայող, վիրավորվել՝ շուրջ 20-ը: Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ ականի պայթյունները հաճախ հրամանատարության չհաշվարկած հրամանների և գործողությունների պատճառով են տեղի ունեցել:

Ցայտուն օրինակ է 2017-ի նոյեմբերի 21-ի և նոյեմբերի 4-ի դեպքերը, որոնց մասին վերևում խոսեցինք: 2018 թվականի առաջին 6 ամիսներին զինծառայողների մասնակցությամբ ականի պայթյունի միայն 1 դեպք է գրանցվել՝ հունվար ամսին: Վստահ ենք, որ այսպիսի դրական վիճակագրություն գրանցվել է նաև մեր ահազանգող և սթափեցնող հրապարակումների շնորհիվ:

Եվ վերջում՝ դրական հանգուցալուծման մասին, որով նաև դուք եք ուրախացել

Ապրիլյան պատերազմի մասնակից Ալբերտ Դալլաքյանի պատմությունը միավորեց համայն հայությանը: Պաշտպանության նախարարությունը մերժել էր գումար հատկացնել 2016 թվականի հունիսի 24-ին մարտական հենակետում գլխից վիրավորում ստացած Ալբերտի բուժմանը: Ինչպես գիտենք, զինվորի ուղեղի մի հատվածը վնասվել էր սպա Ավագ Նահապետյանի կրակոցից: Հասարակությունը օգնության կարիք ունեցող զինծառայողի մասին իմացավ հատկապես մեր հրապարակումներից: Մենք այցելեցինք հոսպիտալ, որտեղ վիրավոր Ալբերտը բուժվում էր: «Զինվորի գլխին կրակած սպան «անբասիր վարքով» ծառայում է ՀՀ Զինված ուժերում» հրապարակումն ունեցավ 15 000-ից ավելի ընթերցող:

Մեր կազմակերպության ղեկավար իրավապաշտպան Ժաննա Ալեքսանյանը մամուլի ասուլիսներում բարձրացրեց Դալլաքյանի խնդիրը: Հայաստանում հնարավոր չէր իրականացնել Ալբերտ Դալլաքյանի լիակատար բուժումը: Իսկ այն Գերմանիայում կազմակերպելու համար անհրաժեշտ էր 45 000 եվրո: Հասարակության բարձր պատասխանատվության դրսևորման շնորհիվ հավաքվեց բուժման անհրաժեշտ գումարը: Ալբերտը բուժումը շարունակում է գերմանական կլինիկայում և բարեհաջող: Մեր ուշադրության ներքո է նաև Դալլաքյանի վիրավորման փաստով քրեական գործը, որը հարուցվել է զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հատկանիշներով: Մեր հրապարակումներում իրավական գնահատական է տրվել այն հանգամանքին, որ կրակոցի հեղինակ, սպա Ավագ Նահապետյանը շարունակում է գտնվել ազատության մեջ:
Եվ վերջում՝ մեր և Պաշտպանության նախարարության հարաբերությունների մասին: Դրանք փափուկ չեն, հատկապես նախկին նախարարների օրոք դրանք աչքի են ընկնել նյարդային դրվագներով և երկուստեք կոշտ քննադատությամբ, բայց ամեն դեպքում կարևոր հարցերի շուրջ համագործակցություն ստացվում է: Հստակ գիտակցում ենք, որ Զինված ուժերը փակ կառույց է, բայց հենց այդ կարգավիճակն է մեզ ստիպում առավել մեծ ուշադրություն դարձնել մարդու իրավունքների խնդիրներին: Անկախ տարաձայնություններից՝ մեր նպատակը նույնն է՝ ունենալ պաշտպանված զինծառայող, հետևաբար՝ ուժեղ և մարտունակ Զինված ուժեր:
Հեղափոխությունը, մենք և զինվորական գործերը

Առաջարկներ

Որպես եզրակացություն ներկայացնում ենք մեր առաջարկները, որոնք կարող են նպաստել բանակում մարդու իրավունքների բարելավմանը:

Տուժողների իրավունքների և շահերի պաշտպանության անկախ համակարգի ձևավորում, այդ նպատակով կատարելով համապատասխան օրենսդրական և կառուցվածքային փոփոխություններ, ձևավորելով տուժողների ներկայացուցիչների և նրանց շահերը ներկայացնող պաշտպանական կողմի հետ պետական մարմինների և պաշտոնատար անձանց կառուցողական գործակցության համակարգ ու մեխանիզմներ, ինչպես նաև տուժողներին և նրանց ընտանիքների անդամներին բարոյական ու նյութական արժանապատիվ փոխհատուցման պայմաններ ու մեխանիզմներ:

Զորակոչի գործընթացի վերանայում և համապատասխանեցում արդի չափանիշներին, մասնավորապես՝ զորակոչի թափանցիկացում, զորակոչիկների

առողջական չափանիշների խստացում, զորակոչիկների բաշխման հստակ, արդարացի և հայեցողականությունը բացառող մեխանիզմների ձևավորում, բժշկական հանձնաժողովների նկատմամբ զորակոչային հանձնաժողովների հսկողության բացառում՝ այդ նպատակով կատարելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Մահվան ելքով դեպքերի հետաքննչական և դատաքննչական նյութերի պարտադիր հրապարակում՝ այդ նպատակով կատարելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Զինծառայողների կարգապահական պատասխանատվության հստակ մեխանիզմների ձեւավորում, բողոքարկման անկախ մարմնի ձեւավորում, հստակ մեխանիզմներ ու երաշխիքներ, հրամանատարների պատասխանատվության գործուն մեխանիզմներ, կարգապահական կալանքի կամ ազատության սահմանափակման այլ ձևերի բացառում:

Զինված ուժերում տեղի ունեցած դժբախտ դեպքերի ու պատահարների և կարգապահության վիճակի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովում ՀՀ պաշտպանության նախարարի տարեկան բաց հաշվետվության օրենսդրական հիմքերի և ավանդույթի ստեղծում:

Օրենսդրական փոփոխություններ.Աշխատանքային խմբի ստեղծում

Փետրվարի 27-ին Լրագրողներ Հանուն Մարդու Իրավունքների ՀԿ-ն կազմակերպել էր «Մարդու իրավունքները ՀՀ Զինված ուժերում» թեմայով քննարկում, որին մասնակցում էին ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, Պաշտպանության նախարարության, դատախազության, անվտանգության խորհրդի աշխատակիցներ, ներկայացուցիչներ Եվրոպայի խորհրդից և հասարակական սեկտորից: Քննարկումը ծավալվեց բանակում առկա խնդիրների շուրջ, որոնց հետ կապված հանդես եկանք օրենսդրական առաջարկություններով: Այժմ այդ առաջարկները քննարկման փուլում են բոլոր կողմերի հետ, ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի հետ պայմանավորվածություն ենք ձեռք բերել ներկայացված առաջարկները համատեղ մշակել և ներկայացնել Ազգային Ժողով օրենսդրական փոփոխություններ կատարելու համար: Ներկայացրել ենք շուրջ 6 առաջարկներ, ահա դրանցից մի քանիսը.

1.Զորակոչի գործընթացի ամբողջական վերանայում և համապատասխանեցում արդի չափանիշներին, մասնավորապես՝ զորակոչի թափանցիկացում, զորակոչիկների

առողջական չափանիշների խստացում, զորակոչիկների առողջական վիճակի զննության ընթացքում անկախ փորձագետների ներգրավում,

2.Միջազգային չափանիշներին համապատասխանող ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագրքի մշակում և ընդունում (ներգրավելով նաև անկախ փորձագետների), որը մասնավորապես պետք է ապահովի զինծառայողների կարգապահական պատասխանատվության հստակ մեխանիզմներ,

3.Անհրաժեշտ է հստակեցնել զինծառայողների սահմանափակ ծառայությունը համապատասխան օրենսդրական փոփոխությամբ, կանոնակարգել, որպեսզի սահմանափակ ծառայությամբ բանակ զորակոչվող զինծառայողի համար չստեղծվեն իր առողջական վիճակին անհամատեղելի ծառայության հետ կապված իրավիճակներ։

Առաջարկներին դեռևս արձագանքել են ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ զինվորական դատախազությունը, ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը՝ հայտնելով իրենց պատրաստակամությունը համագործակցության վերաբերյալ։
Առաջարկների արդիականությունը պայմանավորված է կազմակերպության կողմից կատարված մշտադիտարկման, իրականացված տարբեր ծրագրերի ընթացքում վերհանված խնդիրների հիման վրա: Առաջարկություններն իրենից ներկայացնում են մեխանիզմների սահմանում, որոնց վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների նախագիծ ներկայացնելու համար անհրաժեշտ է ստեղծել աշխատանքային խումբ, որում կընդգրկվեն ոլորտի փորձագետներ, ԱԺ ներկայացուցիչներ և պատասխանատու մարմինների ներկայացուցիչներ, ովքեր հայտնել են պատրաստակամություն մասնակցել քննարկումներին: Արդյունքում ակնկալում ենք մշակել օրենսդրական կոնկրետ առաջարկներ, որոնք կդառնան ԱԺ քննարկման առարկա: Այս գործընթացն իրենից ներկայացնում է մի քանի քայլերի հաջորդականություն:

Որպես առաջին քայլ դիտարկել ենք, ըստ պայմանավորվածության, հանդիպել ԱԺ Պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի անդամների հետ՝ միևնույն ժամանակ հանդիպման պայմանավորվածություն ձեռք բերելով ԱԺ երեք խմբակցությունների հետ: Սա մեզ հնարավորություն կտա հնարավորինս շատ շահագրգիռ պատգամավորներ ընդգրկել գործընթացին, ինչպես նաև ակնկալել խմբակցությունների աջակցությունը: Քանի որ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն Կառավարությունը, ԱԺ պատգամավորը, ԱԺ խմբակցությունը, ապա այս ընթացքում անհրաժեշտ է նաև բանակցել խմբակցությունների և պատգամավորների հետ այն հարցի շուրջ, թե ով որպես հեղինակ նախագիծը կշրջանառի ՀՀ ԱԺ-ում:

Քննարկումների արդյունքում համատեղ կկազմվի և ԱԺ խմբակցություններին կներկայացվի հստակ, գրագետ օրենսդրական առաջարկ, ինչը կլինի հաջորդ քայլը՝ անցում մեխանիզմներից դեպի օրենսդրական կարգավորումների:
Կազմակերպությունը պատրաստի փաթեթը կներկայացնի նաև ՊՆ՝ վերջիններիս դիտողությունները և նկատառումները ստանալու համար:

Մայիսի 17-ին ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում տեղի է ունեցել քննարկում՝ բանակում տեղի ունեցող խնդիրների կանխարգելման համար օրենսդրական փոփոխություններ իրականացնելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու վերաբերյալ: Քննարկմանը մասնակցել են նշված հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, նույն հանձնաժողովի փորձագետներ Սոֆի Բախտամյանը, Աննա Յարմալոյանը, «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ նախագահ Ժաննա Ալեքսանյանը, նույն կազմակերպության փաստաբան Հայարփի Սարգսյանը, փորձագետ Էլինար Վարդանյանը:

ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին առաջարկ է արվել նախագծի վերաբերյալ կազմակերպել քննարկում կամ հնարավորության դեպքում խորհրդարանական լսումներ:
Ամբողջ գործընթացը կլուսաբանվի լրատվամիջոցների կողմից, ինչը հնարավորություն կտա ներկայացվող առաջարկները դարձնել նաև հանրային քննարկման առարկա:
Նախագծերը շրջանառության մեջ դրվելուց հետո կազմակերպությունը կրկին անգամ կհանդիպի ԱԺ խմբակցությունների հետ՝ օրենքի ընդունման հարցում վերջիններիս աջակցության վերաբերյալ բանակցելու համար:

Ազատազրկման վայրեր

Լրագրողներ Հանուն Մարդու Իրավունքների ՀԿ մարդու իրավունքների պաշտպանության մեկ այլ ոլորտ է ազատազրկման վայրերը, այնտեղ պահվող մարդիկ: Մեզ շատ հաճախ են դիմում դատապարտյալների, ազատազրկվածների հարազատներն ու ընտանիքները՝ նշելով ամենատարբեր իրավունքների խախտումներ: Մեր կազմակերպության առջև դրված առաջնահերթությունն է պաշտպանել մարդու իրավունքները հրապարակայնության միջոցով և մենք հաճախ ենք այցելում ազատազրկման վայրեր հանդիպում կալանավորված անձանց, լսում նրանց, բարձրաձայնում նրանց խնդիրները՝ հրավիրելով պատկան մարմինների ուշադրությունը այդ խնդիրների վրա, հաճախ նաև ստանում դրանց լուծումները: Մեր

ուշադրության կենտրոնում , հատկապես, ազատազրկման վայրերում ցմահ դատապարտյալների խնդիրներն են ու մահվան դեպքերը:

2018թ.-ին՝ ամբողջ տարվա ընթացքում, ՔԿՀ-ներում գրանցվել է մահվան 18 դեպք, 2019թ.-ին՝ 4 ամսվա ընթացքում, արդեն 11 դեպք

«Ով մեղավոր ա եղել, որ ես 25 տարի անարդար նստել եմ, պետք ա պատասխան տա»
Նախորդ տարի՝ Ամանորի շեմին, 25 տարի ճաղերի հետևում անցկացնելուց հետո, ազատ արձակվեց 45-ամյա Վահագն Մարուքյանը: Դատապարտյալն ազատության մեջ հայտնվեց ոչ թե արդարացման հիմքով, այլ ծանր առողջական վիճակով: Վերջինս բանտի պատերի ներսում հաշմանդամություն էր ձեռք բերել. դեռ 2011թ-ից Վահագն Մարուքյանի մոտ առաջ են եկել մի շարք առողջական խնդիրներ՝ ընդհանուր թուլություն, մկանների անաշխատունակություն, քայլելու դժվարություն, որն էլ հետագայում հանգեցրել է հաշմանդամության: Նրա մոտ ախտորոշվում է Ռևմատոիդ արթրիտ, հետագայում՝ նաև Միոպատիա: Հենց այս հիվանդությունների հիմքով Վահագնը կարողացավ ազատ արձակվել:
Ազատության մեջ անցկացնելու ողջ ընթացքում Վահագնը Forrights_ի հետ կապի մեջ է լինում, պարբերաբար հայտնում իր առողջական վիճակի մասին, սակայն չի մոռանում արդարադատության մասին.

«Ես սենց չեմ թողնելու: Ով մեղավոր ա եղել, որ ես 25 տարի անարդար նստել եմ, պետք ա պատասխան տա»,- իր խոսքում նշում է Մարուքյանը:

Ցմահ դատապարտյալը պայմանական վաղաժամկետ ազատ արձակվեց, ոչ թե հիվանդության հիմքով, այլ դրական վարքագիծ ունենալու համար
Նախորդ տարվա հոկտեմբերի 16-ին ՀՀ արդարադատության մեջ գրանցվեց աննախադեպ իրողություն. 23 տարի անազատության մեջ գտնվող ցմահ դատապարտյալը պայմանական վաղաժամկետ ազատ արձակվեց ոչ թե հիվանդության հիմքով, այլ՝ դրական վարքագիծ ունենալու համար.
«Տարիներով ձևավորված մշակույթ կոտրվեց: Դատարանը և դատախազը փաստական հանգամանքների հիման վրա օբյեկտիվ դիրքորոշում հայտնեցին: Այս որոշումը մյուս դատապարտյալների համար լավ օրինակ և հիմք կարող են հանդիսանալ, որ վերանայեն իրենց վարքագիծը»,- ամիսներ առաջ Forrights-ի հետ զրույցում նշել էր փաստաբան Միհրան Պողոսյանը:
Կարեն Օգանեսյանը դարձավ այն մարդը, ով ազատության մեջ հայտնվեց ոչ թե «մահվան գնալու», այլ՝ ապրելու նպատակով: Այսօր Կարենն ընտանիքի հետ է, աշխատում է, ինչպես ինքն է ասում՝ ապրում է այնպես, որ էլ ոչ ոքի ցավի պատճառը չդառնա:

Դատարանն ապօրինի է ճանաչել Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումը և փոխել ցմահականի պատժի կրման ռեժիմը, սակայն ՔԿՎ-ն չի կատարում այնՑմահ դատապարտյալ Արթուր Մկրտչյանը շուրջ 23 տարի է, ինչ ճաղերից այն կողմ է: Դեռ նախորդ տարվա օգոստոսի 1-ին նրա գործով աննախադեպ որոշում էր կայացվել: Դատավորն ապօրինի էր ճանաչել Տեղաբաշխման հանձնաժողովի այն որոշումը, որով մերժվել էր փոխել Մկրտչյանի պատժի կրման ռեժիմը՝ փակից դարձնելով կիսափակ:

Դատարանը պարտավորեցրել էր Քրեակատարողական ծառայության Տեղաբաշխման հանձնաժողովին՝ վերականգնել Արթուր Մկրտչյանի խախտված իրավունքները և պատժի կրման ռեժիմը փակից դարձնել կիսափակ: Սակայն քրեակատարողական վարչությունը մինչ օրս չի կատարում դատարանի որոշումը և շարունակում է Մկրտչյանին պահել կիսափակ ռեժիմում:

Մեր բազմաթիվ հարցումներին ի պատասխան, ինչպես Արդարադատության նախարարությունից, այնպես էլ Քրեակատարողական վարչությունից հայտնում են, որ տևական ժամանակ է դատապարտյալի պատժի կրման ռեժիմը փոխվել է կիսափակի, իսկ վարչությունն էլ հավելում է՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ն համապատասխանում է կիսափակ ռեժիմի կրման պայմաններին:
Ցմահ դատապարտյալ Մկրտչյանը կտրուկ հերքում է նախարարության և վարչության հայտարարությունները: Նա շեշտում է, որ իր պատժի կրման ռեժիմի փոփոխությունն արձանագրվել է միայն թղթի կտորի վրա, քանի որ իր բանտային կենցաղում ոչինչ չի փոխվել... դատապարտյալը դեռևս «Նուբարաշեն» ՔԿՀ-ում է:
Արթուր Մկրտչյանն անդրադարձավ նաև անցյալում կատարված անօրինականություններին: Մասնավորապես, 2003 թվականին, երբ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը մահապատժի դատապարտված անձանց պատիժը փոխարինեց ցմահ ազատազրկմամբ, այդ ներման հրամանն անօրինական է եղել:

«Քոչարյանը ներումը տվեց, մահապատիժը դարձրեց ցմահ, բայց դատական որոշումն ուժի մեջ մտավ միայն 2006 թվականին: Երեք տարի մենք եղել ենք անօրինական փակի տակ: Երեք տարի դատական ակտ չի եղել: Երեք տարի մարդը բերդում էր, բայց՝ անօրինական»,- արձանագրում է Մկրտչյանը:

«Սա ՀՀ արդարադատության արնահոսող վերքերից մեկն է, որը պետք է անհապաղ լուծում ստանա»

Փաստաբան Վահե Գրիգորյանը ևս երկրորդ նախագահի որոշումն անօրինական է համարում: Ըստ նրա՝ տեղի է ունեցել կոպիտ իրավախախտում. «Սահմանադրական և քրեական իրավունքի դասագրքային սկզբունք է. գործադիր իշխանությունը պատիժ

չի սահմանում: Պատիժները սահմանվում և մշակվում են արդարադատության մարմինների կողմից, գործադիրն ընդամենն ի կատար է ածում դրանք»,- նշում է նա:
Վահե Գրիգորյանի խոսքով՝ այժմ բանտերում կան ցմահ դատապարտյալներ, որոնք անազատության մեջ են կամայականության հետևանքով: Նրանցից ցանկացածը, ում 20 տարվա ազատազրկման չափը լրացել է, յուրաքանչյուր օր այդ ազատազրկումից դուրս պահվում է կամայականորեն անազատության մեջ: Փաստաբանի հավաստմամբ՝ սա լրջագույն խնդիր է, որի վրա պետք է կենտրոնանա գործադիր իշխանությունը՝ սկսած ՀՀ արդարադատության նախարարությունից:

«Սա ՀՀ արդարադատության արնահոսող վերքերից մեկն է, որը պետք է անհապաղ լուծում ստանա»,- նշում է Վահե Գրիգորյանը:
Հանձնաժողովի «կամայական» որոշումը մնաց անփոփոխ. դատապարտյալի պատժի կրման ռեժիմը չփոխվեց

«Տեղաբաշխման հանձնաժողովն իմ նկատմամբ հաշվեհարդար ա տեսնում ու արդեն 2-րդ անգամ անհիմն մերժում ռեժիմս փոխելու դիմումը: Հանձնաժողովը նման ձևով վրեժ ա լուծում, որ ես իրենց դեմ հաղորդում եմ տվել այն մասին, որ ինձ խոշտանգելով շուրջ 10 ամիս անօրինական պահել են մեկուսացվածության առավել խիստ ռեժիմում, քան նախատեսում է օրենքը»,- Forrights-ի հետ զրույցում հայտարարել էր դատապարտյալ Բաբկեն Ղարդյանը:

Բարձրաձայնված խնդրի հետքերով ուղարկեցինք ՀՀ ԱՆ Տեղաբաշխման հանձնաժողովին, որտեղից պատասխանեցին՝ դատապարտյալն ունի կարգապահական տույժեր, և պետք է շարունակվեն ուղղման աշխատանքները:
Փետրվարի 5-ին հստակ ամրագրվեց՝ հանձնաժողովի «կամայական» որոշումը մնաց անփոփոխ. դատապարտյալի պատժի կրման ռեժիմն այդպես էլ չփոխվեց:
Դատապարտյալին դրական են բնութագրում, սակայն՝ պատժի կրման ռեժիմը խստացնում

Առավել արտառոց դեպքի մասին Forrights-ին ահազանգեցին ընդամենը օրեր առաջ: 37-ամյա դատապարտյալ Հենրիխ Գրիգորյանն արդեն 12 տարի է, ինչ անազատության մեջ է գտնվում: «Վարդաշեն» ՔԿՀ-ում դրական վարքագիծ դրսևորած Գրիգորյանը 2018 թվականի դեկտեմբերի 27-ին տեղափոխվում է պատժի կրման բաց ռեժիմ՝ աշխատելու և ընտանիք կազմելու մտադրությամբ, սակայն ցանկությունը կիսատ է մնում: Մարտի 15-ին, առանց դատապարտյալին պատճառները բացատրելու, Դատախազությունը որոշում է կայացնում Գրիգորյանին կրկին տեղափոխել քրեակատարողական հիմնարկ և ռեժիմը խստացնել՝ դարձնելով կիսաբաց:

Քրեակատարողական վարչությունից մեզ հայտնեցին, որ Սյունիքի մարզի դատախազությունը որոշում է կայացրել դատապարտյալին բաց ռեժիմից տեղափոխել կիսաբաց ռեժիմ, իսկ Տեղաբաշխման հանձնաժողովից պահանջել է վերանայել որոշումը:

Ըստ Դատախազության, Գրիգորյանը 5 կարգապահական խախտում է կատարել, այն է՝ հեռախոս է պահել: Փաստացի, դատապարտյալի պատժի կրման ռեժիմը փոխվել է, շուրջ 3 ամիս անցկացրել բաց ռեժիմում և միայն այժմ է «հայտնաբերվել», որ Հենրիխ Գրիգորյանն ունի 5 կարգապահական տույժ: Հատկանշական է, որ ի հակադրություն Դատախազության պարզաբանման բովանդակության, դատապարտյալի վարքագծի վերաբերյալ դրական բնութագիր է տվել ինչպես «Վարդաշեն» ՔԿՀ-ն, այնպես էլ Նռնաձորի գյուղապետը: Քրեակատարողական վարչությունը ևս նույնակարծիք էր՝ Գրիգորյանը լավագույն դատապարտյալներից է, սակայն Դատախազության որոշումը փոխել չեն կարող:

2019 թվականի 4 ամիսների ընթացքում ՔԿՀ-ներում գրանցվել է մահվան 11 դեպք

2018 թվականի հունվարի 1-ից մինչ ապրիլ ամիս քրեակատարողական հիմնարկներում գրանցվել է կալանավորների և դատապարտյալների մահվան 29 դեպք, որից 26-ի դեպքում գրանցվել է կենսաբանական մահ, 3-ի դեպքում՝ կատարվել է ինքնասպանություն: Այս մասին Forrights-ին տեղեկացրեց Քրեակատարողական ծառայությունը: Նկատենք, որ 2018 թվականի ամբողջ ընթացքում մահացել է 18 անձ, մնացած 11-ը մահացել են 2019 թվականի 4 ամիսների ընթացքում:

Գրավոր հարցում ուղարկեցինք Քննչական կոմիտե, պարզելու՝ մահվան դեպքերի առթիվ հարուցվե՞լ է քրեական գործ: Ի պատասխան ՔԿ-ն հայտնեց, որ մահվան դեպքերից միայն 4-ի առթիվ է հարուցված քրեական գործ, մնացած դեպքերի մասին ՔԿԾ-ն իրենց տեղյակ չի պահել:

Քրեակատարողական ծառայությունն իր հերթին այդ «պարտականությունը» դրեց Դատախազության վրա: Ըստ մեր հարցման պատասխանի՝ քաղաքացիական բժշկական հաստատություններում արձանագրված մահվան դեպքերից յուրաքանչյուրի դեպքում գրություն է ուղարկվում պատժի կատարման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացող դատախազին:
Տարվա առաջին բոթը «Նուբարաշեն» ՔԿՀ-ից էր. 55 տարեկան հասակում հիվանդանոցում մահացավ ցմահ դատապարտյալ Արմենակ Մնջոյանը: Նա բանտարկության տարիներին երբեք չհանձնվեց, մինչև վերջ պայքարեց՝ «արդարադատության ոլորտի աննախադեպ աղետ» որակելով այն միջավայրը, որում ինքը դատապարտվել էր և կրում էր պատիժը արդեն ավելի քան 23 տարի:

Հունվարի 26-ին՝ 44 օր հացադուլի մեջ գտնվող Մհեր Եղիազարյանի մահն արձանագրեցին ՔԿՀ հրավիրված Շտապ օգնության բժիշկները. սրտամկանի ինֆարկտից մահացած կալանավորը կալանավորվել էր դեկտեմբերի 5-ին և հենց նույն օրն էլ հացադուլ հայտարարել, որը տևել էր 44 օր: Նա հացադուլը դադարեցրել էր հունվարի 17-ին ու տեղափոխվել «Նուբարաշենի» բուժմաս: Եղիազարյանի պաշտպանը պնդել էր՝ եթե 44-օրյա հացադուլից հետո Եղիազարյանը բուժվեր ոչ թե «Նուբարաշենի» բուժմասում, այլ քաղաքացիական հիվանդանոցում, հնարավոր է՝ նա այսօր ողջ լիներ:

Նախորդ տարվա միայն 2 ամսվա ընթացքում արձանագրվեց մահվան 4 դեպք, որից 2-ը՝ ինքնասպանություն՝ նույն օրը, նույն ՔԿՀ-ում և նույն մասնաշենքում

«ՔԿՀ-ներում կալանավորների կողմից ինքնասպանության դեպքերի դրդապատճառները տարբեր են, սակայն, եթե հիմնվենք տարիների փորձին, ապա կարող ենք մատնանշել՝ եթե ժամանակին պատշաճ հոգեբանական օգնություն տրամադրվի կալանավորներից շատերին, հնարավոր է նվազեն կամ կանխեն ինքնավնասման և ինքնասպանության դեպքերը: Կալանավորների մեջ լինում են մարդիկ, որոնք առաջին անգամ են ոտք դնում ՔԿՀ, նրանց մեջ կա ներքին հոգեկան ճնշված վիճակ, միջանձնային հարաբերություններ՝ ազատազրկված այլ անձանց հետ»,- Forrights-ի հետ զրույցում նշեց ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ղեկավար Հասմիկ Հարությունյանը:

Կենսաբանական մահերից շատերի դեպքում կարող ենք պատշաճ բուժօգնության բացակայության «մեղավորությունը գտնել»: Մասնավորապետ, մահացած կալանավորների և դատապարտյալների միջին տարիքը 50-ն է լինում, ինչից կարող ենք ենթադրություն անել, որ ծերունական մահն այս դեպքում քիչ հավանական է:

Եթե դիտարկենք ՔԿՀ-ների բուժմասերի անբարեկարգ վիճակը, դեղորայքային անբավարար ապահովվածությունը, բուժսպասարկման ոչ պատշաճ մակարդակը, ապա կարող ենք արձանագրել, որ կալանավայրերում մահացության դեպքերը, եթե ոչ ամբողջությամբ ինֆարկտային կամ անբուժելի հիվանդության հետևանքն է, ապա ոչ պատշաճ բուժօգնությունը ևս անմասն չի մնում:

Դիտարկումները ցույց են տալիս նաև, որ ՔԿՀ-ներում մեծ թիվ են կազմում սրտի իշեմիկ հիվանդությամբ և շաքարային դիաբետով հիվանդ անձինք, որոնք պատշաճ չեն ապահովվում դեղորայքով, բացակայում են հիվանդությունների հայտնաբերման և վերահսկման համար անհրաժեշտ սարքավորումները, օպերատիվ բժշկական միջամտությունը նույնպես երաշխավորված չէ:

«Կալանավայրերում կան «քրեական մշակույթի չգրված օրենքներ», որոնք նշանակություն են ունենում անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը»

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»-ի ղեկավար Արթուր Սաքունցը, անդրադառնալով ՔԿՀ-ներում գրանցված ինքնասպանության դիմած անձանց, նշում է, որ նրանց հանդեպ առկա է եղել նվաստացնող վերաբերմունք.

«Ինքնասպանություն գործած և՛ կալանավորը, և՛ դատապարտյալն ունեցել են ներքին խնդիրներ: Նրանք առաջին հերթին առնչվում են սոցիալ-հոգեբանական խնդրին. առաջ է գալիս ՔԿՀ-ում նրանց աղապտացման հարցը: Մեզ բոլորիս համար էլ պարզ է, որ կալանավայրերում կան, այսպես ասած, «քրեական մշակույթի չգրված օրենքներ», որոնք էլ նշանակություն են ունենում անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը:

Այստեղ արդեն անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք նախարարության և ՔԿՀ անձնակազմի կողմից ջանք է գործադրվում, որ նման դրսևորումները և արժեքային համակարգն անձի նկատմամբ լրացուցիչ նոր հետապնդում չառաջացնեն: Կան լուրջ հարցեր, որոնց վերացման համար ղեկավարությունն այս պահին որևէ ջանք չի գործադրում»,- Forrights-ի հետ զրույցում նշեց Սաքունցը:
Ժամանակին Արտակ Զեյնալյանը հայտարարում էր՝ «Նուբարաշեն» ՔԿՀ միայն ոտք դնելն արդեն իսկ անմարդկային վերաբերմունք է

Հայաստանի Հելսինկյան ասոցիացիայի նախագահ, իրավապաշտպան Նինա Կարապետյանցը, անդրադառնալով ՔԿՀ-ներում գրանցված մահվան դեպքերի կտրուկ աճին, նշեց՝ հավանականությունը մեծ է, որ նախկինում ճիշտ վիճակագրություն չի եղել, մահվան դեպքերից մի քանիսի մասին Քրեակատարողական վարչությունը չի հայտնել կամ չի բարձրաձայնել, այդ պատճառով էլ այսօր նման կտրուկ աճ ենք գրանցում ինքներս մեզ համար: Ըստ իրավապաշտպանի՝ ՔԿՀ-ները փակ համակարգ են, առանձին մարդկանց են վերաբերում, հետևաբար, իրենց մասին տեղեկությունները շատ արագ չեն տարածվում.

«Բացի վերոնշյալից, կան քրեակատարողական հիմնարկներ, որոնց պահման պայմաններն ուղղակի անթույլատրելի են: Չկա բավարար բուժօգնություն, չկան մասնագետներ, բացակայում է համապատասխան բժշկական սարքավորումներն ու տեխնիկաները, որոնք ցանկացած պահին կարող են կալանավորի կամ դատապարտյալի կյանքը փրկել:

Անհրաժեշտություն կա նաև վերանայել կալանքի հետ անհամատեղելի հիվանդությունների ցանկը: Շատ են լինում դեպքեր, երբ անձի առողջական վիճակը

քրեակատարողական հիմնարկում կայուն պահել հնարավոր չի լինում և անձին տեղափոխում են քաղաքացիական հիվանդանոց, սակայն այստեղ էլ այլ խնդրի ենք բախվում. հասարակության մեջ դեռևս արմատացած է այն համոզմունքը, որ բանտում կամ կալանավայրում գտնվող մարդը հանցագործ է, ուստի կարելի է նրան ոչ պատշաճ և բավարար օգնություն ցուցաբերել: Այստեղ մենք դեռ շատ անելիքներ ունենք»,- նշեց Նինա Կարապետյանցը:

Իրավապաշտպանը մեկ անգամ չէ, որ այս մասին բարձրաձայնել է: Forrights-ի հետ զրույցում նա հայտնեց, որ այն ժամանակ դեռևս փաստաբան և իրավապաշտպան, այժմ՝ Արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը հայտարարում էր, որ միայն ոտք դնել «Նուբարաշեն» ՔԿՀ արդեն իսկ անմարդկային վերաբերմունք և խոշտանգում է անձի նկատմամբ: Նախարարի պաշտոնում Զեյնալյանը կարծես թե մոռացել է դիրքորոշման մասին:

Մշտադիտարկումն իրականացվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում: